ՀԽՍՀ ՀՈՂԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏ

# ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐ ՑԵՎ ՆՅՈՒԹԵՐ 1937 Թ. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԼԱՆՆԵՐԻ ՑԵՎ ՁԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

**№ 1**

63
Հ-25

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ • 1937

04 AUG 2010

AUG 2010
0 9 SEP 2013

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵ՛Ք

ՀԽՍՀ ՀՈՂԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏ

63
Հ-25

# ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԵՎ ՆՅՈՒԹԵՐ
# 1937 Թ.
## ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԼԱՆՆԵՐԻ ԵՎ ՁԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

№ 1

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ • 1937

Гос. публ. библиотека им. А. Мясникяна

ПОСТАНОВЛЕНИЯ и МАТЕРИАЛЫ К ПЛАНУ СЕЛЬСКОГО ХОЗЯЙСТВА И О МЕРОПРИЯТИЯХ НА 1937 Г.

Армсельхозгиз, Ереван, 1937 г.

# 1937 ԹՎԻՆ
## ՑԵՐԿՐԻՆ ՏԱՆՔ ՀԵԿՏԱՐԻՑ ԱՌՆՎԱԶՆ 15 ՑԵՆՏՆԵՐ ՀԱՑԱՀԱՏԻԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՈԼՈՐ ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆՆԵՐԻՆ, ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՆԵՐԻՆ ՅԵՎ ՄԵՔԵՆԱՏՐԱԿՏՈՐԱՅԻՆ ԿԱՅԱՆՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ

ՀԱՑԱՀԱՏԻԿԱՅԻՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐԻ ԲԱՐՁՐ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՎՈՐՆԵՐԻ ԿՈՉԸ

Փառապանծ մի դրոշ է ծածանվում մեր հզոր ու յերջանիկ հայրենիքի վրա. դա ստալինյան Սահմանադրության մեծ դրոշն է: Առաջ է սլանում մեր անպարտելի հայրենիքը: Մեր հայր, բարեկամ, առաջնորդ և հանճարեղ ուսուցիչ ընկեր Ստալինը մեզ տանում է մարդկության՝ դարերով յերազած յերանավետ աշխարհը՝ դեպի կոմունիզմ: Այդ ճանապարհը մենք անցնում ենք այնքան արագ, ինչքան ավելի լայն և խորն ենք ծավալում ստախանովյան շարժումը՝ մեր աշխատանքի բոլոր բնագավառներում:

Մի տարի անցավ այն պատմական ժամանակից, յերբ մեր Թանգագին առաջնորդը մեր առաջ խնդիր դրեց՝ մոտ ապագայում, 3—4 տարվա ընթացքում, արտադրել տարեկան 7—8 միլիարդ փութ հացահատիկ: Ստալինյան այդ լոզունգի կենսագործման առաջին տարին, ստախանովյան շարժման առաջին տարին՝ չնայած վորոշ շրջանների համար աննպաստ իր կլիմայական պայմաններով, այնուամենայնիվ բերքատվության բարձրացման չտեսնված մի տարի հանդիսացավ: Սոցիալիստական հողագործության մեր ստախանովականներն ապացուցեցին, վոր իրենք ընդունակ են հրաշքներ գործել առաջավոր տեխնիկայով զինված այն հողի վրա, վորը կոլտնտեսություններին ամրացված է անվճար, անժամկետ, այսինքն՝ առհավետ օգտագործելու համար:

Մեծ Ստալինի ձեռքով կերտված՝ Գյուղատնտեսական արտելի ստալինյան կանոնադրության անշեղ կենսագործումը մեզ տանում է կոլտնտեսային ունեվորության և կուլտուրայի նորանոր բարձունքներ:

1936 թվին Թալինի և Արթիկի մանուշակագույն բարձունքներում, կապույտ Սևանի ծաղկուն ավազանում, Միկոյանի և Ալլահվերդու լեռնաշխարհում, Շիրակի և Աշտարակի դաշտավայրերում իսկապես հրաշքներ գործեցին կոլտնտեսային առաջավոր մարդիկ: Ապարանի շրջանի Թ. Գյողալդարայի կոլտնտեսության ողակավոր Ամիրխան Աբրահամյանը 2 հեկտար հացաբույսի յուրաքանչյուր հեկտարից ստացել է 82 ցենտներ բերք, Բասարգեչարի շրջանի Գյոզակբուլաղի՝ ընկեր Բերիայի անվան կոլտնտեսության անդամ Լևոն Մարգարյանը 7 հեկտար հացաբույսի ամեն մի հեկտարից 70,3 ցենտներ բերք ստացավ: Նույն շրջանի Մ. Կարակոյունի կոլտնտեսության անդամ Բյազիմ Բյազիմովը իր մշակած յոթը հեկտար հացաբույսի ամեն մի հեկտարից ստացավ 54 ցենտներ բերք: Հեկտարից նույնքան բերք ստացավ նաև նույն կոլտնտեսության ողակավոր Իմամվերդի Հուսեյնովը: Ն. Ջաղալուի կոլտնտեսության անդամ Խալաթյան Սահակը 5 հեկտար աշնանացան «Ուկրաինկայի» ամեն մի հեկտարից 62 ցենտներ բերք ստացավ: Արթիկի շրջանի Հառոմ գյուղի կոլտնտեսության անդամ, խրճիթ-լաբորա-

տորիայի վարիչ Վասակ Վարաժյանը 15 հեկտար փորձադաշտի ամեն մի հեկտարից 45,5 ցենտներ հացահատիկ ստացավ: Հեկտարից նույնքան բերք ստացավ նաև նույն կոլտնտեսության անդամ Ասատրյան Արշակը, որը մշակում էր 15 հեկտար տարածություն: Մարտունու շրջանի Կզլխարաբայի կոլտնտեսությունը, հողը մշակելով գյուղատնտեսի ցուցմունքներով, անցյալ տարի կոլտնտեսային միջին բերքատվությունը հասցրեց 25,5 ցենտների իսկ առանձին հեկտարներից ստացավ ավելի քան 60 ցենտներ բերք: Բերքատվության նույնպիսի ռեկորդային ցուցանիշներ տվեց Ն. Բայազետի շրջանի Սարուխան գյուղի կոլտնտեսության բրիգադիր Ազիզ Գրիգորյանը: Նա առանձին հողակտորներից ստացավ մինչև 64 ցենտներ հացահատիկ, իսկ բրիգադի 74 հեկտար ցանքի միջին բերքատվությունը հասցրեց 17,4 ցենտների: Աշտարակի շրջանի Յեղվարդ գյուղի կոլտնտեսությունը 1260 հեկտար տարածության ամեն մի հեկտարից ստացավ 20,5 ցենտներ հացահատիկ:

1936 թվին հացահատիկային կուլտուրաների միջին բերքատվությունը Հայաստանում հասավ 11,9 ցենտների՝ 1935 թվի 8,8 ցենտների փոխարեն:

Շքանշանակիր կոմբայնավար Գուրգեն Մարջանյանն իր կոմբայնի արտադրողականությունը հասցրեց 927 հեկտարի, շքանշանակիր տրակտորիստ Ալեքսան Պողոսյանը ՉՏԶ տրակտորով վարեց 2138 հեկտար, շքանշանակիր Սպիրիդոն Տոնոյանն իր բրիգադում ամեն մի ՍՏԶ տրակտորի արտադրողականությունը հասցրեց 1010 հեկտարի: Թալինի ՄՏկայանի տրակտորային բրիգադիր ընկ. Միսաք Գրիգորյանի բրիգադի ամեն մի ՍՏԶ տրակտորի արտադրողականությունը հասավ 1242 հեկտարի: Մարտունու ՄՏկայանի տրակտորիստ ընկեր Անդրանիկ Ադամյանն իր ՍՏԶ տրակտորով 1160 հեկտար վար կատարեց: Նույն ՄՏկայանի տրակտորային բրիգադիր ընկեր Պետիկ Սաֆարյանն ամեն մի ՍՏԶ տրակտորի արտադրողականությունը հասցրեց 1018 հեկտարի: Բասարգեչարի ՄՏկայանի կալսիչավար ընկեր Սարգիս Գրիգորյանը բերքահավաքի սեզոնում իր կալսիչ մեքենայի արտադրողականությունը հասցրեց 1215 տոննի, պլանով նախատեսված 400 տոննի փոխարեն: Բազմաթիվ են այդպիսի մարդիկ, որոնք աճել են կոլտնտեսային գյուղում:

Մեծ Ստալինի հանճարով, նրա հայրական հոգատարությամբ Խորհրդային մեծ Միության յեղբայրական ընտանիքում խոշոր հաջողություններ է հասավ մեր յերկիրը: Մանավանդ վերջին տարիներում Անդրկովկասյան ժողովուրդների կողմից ջերմորեն սիրված, հայ ժողովրդի բարեկամ, Անդրկովկասի բոլշևիկների ղեկավար ընկեր Լ. Բերիայի անմիջական ղեկավարությամբ Հայաստանի գյուղը թևակոխեց իր բարգավաճման շրջանը: «Մենք կարող ենք ուղղակի հայտարարել — ինչպես ճիշտ կերպով նշում է Հայաստանի բոլշևիկների մարտական ղեկավար ընկեր Ամատունին, — վոր վերջին տարիներում չի յեղել վորևե քիչ թե շատ նշանավոր գործ Հայաստանում, վորի հաջողությունը կապված չլիներ հավատարիմ ստալինյան՝ մեր թանգագին Լավրենտիի անվան հետ»: Իրականություն է դարձել մեր յերազանքը, մեր գյուղը մուտք է գործել 1229 տրակտոր, 115 կոմբայն, 185 կալսիչ. Մեր սոցիալիստական գյուղատնտեսության մեջ աշխատում են մոտ 400 գյուղատնտես և 250 ագրոտեխնիկ: Կոմբայնն ու տրակտորը, կալսիչն ու շարքացանը բարձրացան Բասարգեչարի, Մարտունու, Բայազետի, Ամասիայի



Ապարանի լեռները: Մեր սրտերը բերկրանքով են լցվում այս վոգեշնչող իրականությունից:

Այդ բոլորը մեզ տվեց մեր հարազատ Կոմունիստական կուսակցությունը, մեր թանգագին հայր Ստալինը:

Այժմ մենք վոտ ենք դրել 1937 հոբելյանական տարին. դա պրոլետարական մեծ հեղափոխության քսաներորդ տարին է, ստալինյան մեծ Սահմանադրության կենսագործման առաջին տարին: Այդ թվականը պետք է լինի սոցիալիստական գյուղատնտեսության մեջ չտեսնված ռեկորդների տարի: Ստախանովյան մրցության լայն ծավալումով մենք պետք է այս տարի առանձին ռեկորդներից անցնենք մասսայական ռեկորդների, հասնենք բարձր, կայուն բերքատվության: Յեկեք, սիրելի, ընկերներ, արժանավոր կերպով հավերժացնենք այդ փառապանծ տարեդարձը: Յեկեք ցույց տանք, ընկերներ, թե ինչպիսի հերոսությունների յեն ընդունակ գյուղատնտեսության ստալինյան սաները, սոցիալիստական դաշտերի ստախանովականները:

Մենք՝ հացահատիկային կուլտուրաների բերքատվության առաջավորների հանրապետական յերկրորդ խորհրդակցության մասնակիցներս՝ կոչ ենք անում բոլոր կոլտնտեսություններում ապահովել բերքատվության բարձացումը, այն հասցնելով՝ հանրապետության մեջ հեկտարից — առնվազն 15 ցենտների: Մեզանից յուրաքանչյուրը պարտավորվում է իր աշխատանքի փորձի հիման վրա, իր կոլտնտեսության մեջ աճեցնել բերքատվության նոր վարպետներ: Մենք կոչ ենք անում բոլոր կոլտնտեսականներին՝ առավելագույն չափով ընդարձակել շարքացանը, կիտել և լավ պահպանել պարարտանյութը, անցյալ տարվա համեմատությամբ կրկնակի չափով ընդարձակել պարարտացման տարածությունը, ըստ վորում պարարտացումը կատարել վոչ միայն գոմաղբով և խառնաղբով, այլև վորպես պարարտանյութ ոգտագործել խամ հողը, գետերի և առուների տիղմը, անտառամերձ վայրերում՝ անտառի փտահողը, հին մակաղատեղերի, գյուղատեղերի հողը, անասունների մեզը, ընտանի թռչունների աղբը, ինչպես այդ անում են մեր մի շարք առաջավոր կոլտնտեսություններ:

Մենք կոչ ենք անում գարնանացանը կատարել նվազագույն ժամկետում՝ 6—7 աշխատանքային որվա ընթացքում: Մենք կոչ ենք անում այս տարի մեծ չափերով ավելացնել վարելահողի տարածությունն ի հաշիվ միջնակների, քարքարոտ ու խոպան տարածությունների, ինչպես նաև ավելացնել վոռոգելի տարածությունները՝ նոր ջրանցքներ, առուներ, ջրամբարներ կառուցելով և լիովին ոգտագործելով գարնան հեղեղների և սարերում կուտակված ձյան ջուրը, ինչպես 1936 թվին այդ արին Բասարգեչարի, Ն. Բայազետի, Մարտունու, Լենինականի, Միկոյանի առաջավոր կոլտնտեսականները: Մենք կոչ ենք անում գարնանը փոցխել ամբողջ աշնանացանը, ճշտորեն կիրառել ցանքաշրջանառությունը, յարովիզացված սերմացվով նախատեսված ցանքի պլանները կատարել կրկնակի չափով, զարկ տալ տեսակավոր, զտասորտ սերմերի ցանքին, առավելագույն խնամք նվիրել սերմադաշտերին, առանձնահատուկ ուշադրություն դարձնել խրճիթ-լաբորատորիաների աշխատանքի և նրանց փորձի ոգտագործմանը:

Ոչ մի կոլտնտեսություն առանց սերմազատիչի: Այս խնդրի կենսագործման համար կոչ ենք անում բոլոր կոլտնտեսություններին՝ 1937 թվին կազմակերպել սերմադաշտեր և դրանք դարձնել բարձր բերքատվության որինա-

կելի դաշտամասեր: Սերմադաշտերն ապահովել խոր մշակված ցրտահերկով,
պարարտացված, մոլախոտերից միանգամայն զերծ հողակտորներով: Սերմա-
դաշտերի համար անհրաժեշտ սերմացուն ձեռքով հատիկ առ հատիկ ընտրել
և ամբողջ սերմադաշտերն ապահովել ընտիր սերմացվով:

Աշնանացանի և գարնանացանի սերմադաշտերի, ինչպես և ընդհանուր
ցանքի բերքահավաքի ժամանակ ձեռքով ընտրել բերքատու, չորադիմաց-
կուն, լավորակ հասկեր այն չափով, որ առաջիկա աշնանացանի, ինչպես
և 1938 թվի գարնանացանի սերմադաշտերն ապահովվեն ավելի բարձրորակ
սերմացվով:

Մենք կոչ ենք անում՝ հացահատիկային ցանքերն այնքան քաղհանել,
որ մոլախոտը՝ բարձր բերքի այդ գլխավոր թշնամին՝ լիովին ոչնչա-
ցվի:

Մենք կոլտնտեսությունների և մեքենատրակտորային կայանների
բոլոր աշխատողների պատվի խնդիր ենք դարձնում 1937 թ. ՍՏԶ տրակ-
տորների միջին արտադրողականությունը բարձրացնել 550 հեկտարի, ունի-
վերսալ տրակտորներինը՝ 200 հեկտարի, ՉՏԶ տրակտորներինը՝ 1600 հեկ-
տարի, կոմբայններինը՝ 450 հեկտարի, կալսիչներինը՝ 600 տոննի:

Մեքենատրակտորային կայանի աշխատողնե՛ր, պայքարենք կուլտու-
րական մեքենատրակտորային կայանների համար, կա՛րգ ու կանոն մտցնենք
տրակտորային պարկում, ամենակարճ ժամանակամիջոցում ավարտենք
տրակտորների ձմեռային ռեմոնտը, ապահովենք նորոգումների բարձր
որակը:

Ընկե՛ր գյուղատնտեսներ, մենք կոչ ենք անում ձեզ՝ ձեր գիտությունը
հասցնել յուրաքանչյուր կոլտնտեսականի, ձեր մասնագետի հսկող աչքն
ապահովել բոլոր կոլտնտեսություններում և բոլոր հողամասերում և պայքա-
րել, որպեսզի ստախանովյան ագրոտեխնիկան կիրառվի բոլոր կոլտնտե-
սություններում, բրիգադներում և օղակներում, որպեսզի 1936 թվին
հետ մնացող կոլտնտեսություններն այս տարի հասցնենք առաջավորների
մակարդակին:

Մենք կոչ ենք անում բոլոր կոլտնտեսականներին՝ 1938 թվին ավելի
բարձր բերքի նախապայմաններ ստեղծելու համար, վաղ ցելի աշխատանք-
ներն սկսել և ավարտել գարնանացան հացահատիկների ցանքի ավարտման
հետ միաժամանակ: Պետք է լավ հիշել, որ ցելն առանց հետագա կանոնա-
վոր մշակման չի կարող դառնալ բերքատվության բարձրացման կարևորա-
գույն լծակ: Մեր խնդիրն է՝ վաղ ցելն անմիջապես փոցխել, մշակել մեկից
երկու անգամ, միանգամայն զերծ պահելով այն մոլախոտից:

Ընկե՛ր կոլտնտեսականներ, 1936 թվին մեր բերքն ավելի շատ կլիներ,
եթե պայքարը կորուստների դեմ լավ կազմակերպեյինք: Չմոռանանք եր-
բեք, որ 1936 թվին միջին հաշվով յուրաքանչյուր հեկտարից մենք կորց-
րել ենք 2—3 ցենտներ հացահատիկ, իսկ առանձին կոլտնտեսություն-
ներում այդ կորուստն ավելի մեծ է եղել: Ցե՛կեք, ընկերնե՛ր, ամենուրեք
վճռական պայքար ծավալենք ամեն տեսակի կորուստների դեմ՝ յուրաքան-
չյուր հատիկի համար:

Ընկերնե՛ր, դեռ մի քանի օր առաջ պրոլետարական դատարանը մեր
մեծ ժողովրդի միահամուռ կամքով, հեղափոխական օրենքի խստությամբ



արժանի պատիժը տվեց տրոցկիստական-հակահեղափոխական իժերին, ո-
րոնք փորձեր էին կատարում ձեռք բարձրացնել մեր թանգագին հոր, մեր
մեծ ու հարազատ ընկեր Ստալինի և նրա զինակիցների վրա: Նրանք դի-
վերսիոն, քայքայիչ-վնասարարական աշխատանքի միջոցով, ստոր լրտեսու-
թյամբ ցանկանում էին մեր երկիրը հանձնել գիշատիչ կապիտալիստներին,
նրանք ցանկանում էին երկրի երեսից ջնջել կոլտնտեսային հրաշալի
հանրակարգը, որ երջանկություն, բախտավորություն բերեց մեզ համար,
մեզ ազատեց դարավոր աղքատությունից, տգիտությունից, կուլակային ստրկու-
թյան շղթաներից: Նրանք ձգտում էին մեր արյան գնով ձեռք բերած հողը
կրկին վերադարձնել կալվածատերերին ու կուլակներին:

Ի պատասխան տրոցկիստական-ֆաշիստական բանդաների, դաշնակ-
ների, բոլոր գույնի նացիոնալիստական տականքների ստոր, տեռորիստա-
կան, դիվերսիոն գործունեության, մենք այս տարի ավելի լայնորեն
կծավալենք սոցիալիստական մրցությունն ու ստախանովյան շարժումը,
և նոր թափով առաջ կմղենք գարնանացանի նախապատրաստումը և երկ-
րորդ ստախանովյան տարին վճռական տարի կդարձնենք ստալինյան 7—8
միլիարդ փութ հացահատիկի համար մղվող պայքարում:

Մենք սիրում ենք մեր երկիրը, մեր առաջնորդներին: Մենք մեր
սքանչելի հայրենիքի և ոչ մի վերջին հողը չենք զիջի այդ զարշելի ոճրա-
գործների արտասահմանյան ֆաշիստ-դաշնակիցներին—իմպերիալիստական
գիշատիչներին: Երբ հարկ լինի, ինչպես մի մարդ, մենք մեր կրծքով
կպաշտպանենք սոցիալիզմի Հայրենիքի սրբազան հողը և այդ հողի վրա
ստալինյան հանճարով ստեղծված կոլտնտեսային հանրակարգը:

Կեցցե՛ մեր հարազատ Կոմունիստական կուսակցությունը:

Կեցցե՛ մեր հայր, ուսուցիչ և բարեկամ հանճարեղ Ստալինը:

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ-Ի ՀԱՑԱՀԱՏԻԿԱՅԻՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐԻ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՎՈՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՎՈՂՋՈՒՅՆԸ

# ԸՆԿԵՐ ՍՏԱԼԻՆԻՆ

# ԹԱՆԳԱԳԻՆ ԸՆԿԵՐ ՍՏԱԼԻՆ

Մենք, Հայաստանի կոլտնտեսային դաշտերի ստախանովականներս, հավաքվելով հացահատիկային կուլտուրաների բերքատվության առաջավորների հանրապետական 2-րդ խորհրդակցությանը, մեր կոլտնտեսային բոցավառ վողջույնն ենք հղում ձեզ՝ հաղթական սոցիալիզմի յերկրի մեծ ղեկավարին, մեր հորն ու բարեկամին, ազատ ու բերկրալից կյանքի սահմանադրության ստեղծողին։

Մեկ տարի սրանից առաջ, մեր թանգագին ընկեր Ստալին, Դուք մեր առջև, Խորհրդային Միության բոլոր կոլտնտեսականների առջև, խնդիր դրիք՝ պայքարել 7—8 միլիարդ փութ հացահատիկի համար։

Մենք հրճվանքով ձեռնամուխ յեղանք այդ խնդրի կատարմանը։ Մեր կոլտնտեսություններում լայնորեն ծավալվեց սոցիալիստական մրցությունը բարձր բերքի համար մղվող պայքարում։

Լենինականի շրջանի Ճլոխան գյուղի կոլտնտեսության ողակավար Սարգիս Մանուկյանը 4 հեկտար հողամասի յուրաքանչյուր հեկտարից ստացել ե 60 ցենտներ ցորենի բերք։ Կոլտնտեսական Մարտոյան Խաչատուրը՝ Ղուլալի գյուղի կոլտնտեսությունից, յուրաքանչյուր հեկտարից ստացել ե 68 ցենտներ գարի։ Տասնյակ ողակներ և բրիգադներ նվաճել են հեկտարից 40—50 և ավելի ցենտներ բերք։ Հացահատիկային կուլտուրաների միջին բերքատվությունն ամբողջ Հայկական ԽՍՀ-ում 1936 թվականին հասել ե հեկտարից 11,9 ցենտների, 1935 թվականի 8,8 ցենտների փոխարեն։

Շքանշանակիր կոմբայնավար Գուրգեն Մարջանյանը գերակատարել ե Ձեզ տված խոստումը, «Կոմունար» կոմբայնով հավաքելով 927 հեկտարի բերք։ Շքանշանակիր տրակտորիստ Սպիրիդոն Տոնոյանը նույնպես գերակատարել ե Ձեզ տված խոստումը, յուրաքանչյուր «ՍՏԶ» տրակտորով իր բրիգադում միջին հաշվով մշակելով 1010 հեկտար։ Թալինի ՄՏԿայանի բրիգադիր Միսաք Գրիգորյանը գերակատարել ե իր պարտավորությունը, յուրաքանչյուր «ՍՏԶ» տրակտորով մշակելով 1242 հեկտար։

Բայց այս ցուցանիշները վոչ բերքատվության տեսակետից և վոչ ել մեքենաների ոգտագործման տեսակետից սահմանակետ չեն։ Ստալինյան Սահմանադրության յերջանիկ յերկրում բերքատվության ու աշխատանքի արտադրողականության բարձրացման հնարավորություններն անսահման են։ Կոլտնտեսային կարգը ստախանովյան շարժման հիման վրա մեր առջև ուղիներ ե բաց անում դեպի առաջավոր սոցիալիստական տեխնիկայի՝ աշխարհում չտեսնված հաղթանակներ։

Հավաստիացնում ենք Ձեզ, մեր սիրելի առաջնորդ, վոր մենք, վոգեշնչված ստախանովյան առաջին տարվա հաջողություններով, լի ստախանովյան

յերկրորդ տարում նոր ռեկորդներ նվաճելու վճռականությամբ, կձգտենք այն բանին, վոր բարձր ու կայուն բերքը դառնա բոլոր կոլտնտեսային դաշտերի անխախտ օրենքը։

Տրոցկիստական ճիվաղները, անարգ դավաճանները, լրտես-դիվերսանտները ցանկանում եյին ցրել կոլտնտեսությունները, վերադարձնել կուլակային շահագործումը և վաճառել մեր հայրենիքը։ Ֆաշիզմի լակեյները այդ անարգ բանդան ստացավ արժանի պատիժը։ Գերագույն դատարանի կայացրած դատավճիռն ամբողջ խորհրդային ժողովրդի դատավճիռն է, այդ ժողովրդի կամքն ու ցասումն է։

Զինված ստալինյան զգաստությամբ, Անդրկովկասի և ամբողջ Խորհրդային Միության ժողովուրդների համերաշխ ընտանիքում, ստալինյան Սահմանադրության դրոշի տակ մենք էլ ավելի լայնորեն կծավալենք սոցիալիստական մրցությունը կոլտնտեսային դաշտերում, մեր հայրենիքը կդարձնենք ավելի բերքառատ ու ամենահզոր։

Մենք պարտավորվում ենք 1937 թվականին էլ ավելի բարձրացնել մեր դաշտերի պտղաբերությունը, հասնել էլ ավելի բարձր բերքատվության։

Մենք հավաստիացնում ենք Ձեզ, վոր պատվով կկատարենք մեր հայրենիքի հանդեպ, Ձեր հանդեպ, մեր իմաստուն առաջնորդ, ստանձնած մեր պարտավորությունները։

Կեցցե՛ մեր հզոր սոցիալիստական յերկիրը։

Կեցցե՛ Լենինի-Ստալինի մեծ կուսակցությունը։

Կեցցե՛ մեր սիրելի առաջնորդ մեծ Ստալինը։

Հայկական ԽՍՀ-ի հացահատիկային կուլտուրաների
բերքատվության առաջավորների խորհրդակցություն



# ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ-Ի ՀԱՑԱՀԱՏԻԿԱՅԻՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐԻ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՎՈՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՎՈՂՋՈՒՅՆԸ

# Ը Ն Կ Ե Ր Բ Ե Ր Ի Ա Յ Ի Ն



Гос. Публ. Библиотека ... им. А. Мясникяна

## ԹԱՆԳԱԳԻ՛Ն ԸՆԿԵՐ ԲԵՐԻԱ

Հայաստանի՝ հացահատիկային կուլտուրաների բերքատվության առաջավորների հանրապետական 2-րդ խորհրդակցությանը մասնակցողներն իրենց բոցավառ ողջույնն են հղում Ձեզ, Անդրկովկասի բոլշևիկների ղեկավարին, մարտական ստալինյանին, Հայաստանի կոլտնտեսականների բարեկամին:

Վոգեշնչված ժողովուրդների սիրելի առաջնորդ ընկեր Ստալինի կոչով՝ 7—8 միլիարդ փութ հացահատիկի համար պայքարելու մասին, մենք ստախանովյան առաջին տարում հասանք բերքատվության զգալի վերելքի: Ձեր ղեկավարությամբ Հայաստանի կոլտնտեսականները 1936 թվականին հանրապետության մեջ հեկտարի միջին բերքատվությունը 1935 թվականի համեմատությամբ բարձրացրին 3,1 ցենտներով:

Դաշտում կատարվող իսկական ստախանովյան աշխատանքի օրինակներ ցույց տվին կոլտնտեսականներ Սարգիս Մանուկյանը՝ Լենինականի շրջանի Ճլոխան գյուղի կոլտնտեսությունից, վոր հեկտարից ստացել է 60 ցենտներ ցորենի բերք, Բասարգեչարի շրջանի ընկեր Բերիայի անվան կոլտնտեսության կոլտնտեսական Լևոն Մարգարյանը, վոր 7 հեկտար հողամասի յուրաքանչյուր հեկտարից ստացել է 70,3 ցենտներ գարու բերք:

Մեր մեքենատրակտորային կայաններն սկսել են ավելի լավ աշխատել: Աճել է մեքենաների արտադրողականությունը: Մեր ՄՏկայանների շքանշանակիր տրակտորիստներն զգալիորեն գերակատարել են ընկեր Ստալինին տված իրենց խոստումները:

Այս հաջողությունները մենք ձեռք ենք բերել Ձեր անմիջական ղեկավարությամբ, անշեղորեն կենսագործելով մեծ Ստալինի ցուցումները, որ-որի վրա ամրապնդելով Անդրկովկասի և ամբողջ Խորհրդային Միության ժողովուրդների բարեկամությունը:

Մենք հավաստիացնում ենք Ձեզ, թանգագին ընկեր Բերիա, վոր, ի պատասխան ժողովրդի անարգ թշնամիների, ֆաշիստական վարձկանների՝ հակահեղափոխական տրոցկիստների տեռորիստական-դիվերսիոն գործունեությունների, դաշնակների ու մենշևիկների, բոլոր գույնի նացիոնալիստների, մենք էլ ավելի լայնորեն կծավալենք սոցիալիստական մրցությունն ու ստախանովյան շարժումը, կկազմակերպենք լավագույնների փորձի մասսայական հաղորդումը հետ մնացողներին, և արդեն ստախանովյան 2-րդ տարին վճռական տարի կդարձնենք ստալինյան 7—8 միլիարդ փութ հացահատիկի համար մղվող պայքարում:

Կեցցե մեր յերջանիկ, անպարտելի Հայրենիքը:

Կեցցե մեծ Կոմունիստական կուսակցությունը:

Կեցցե Անդրկովկասի ժողովուրդների անխզելի բարեկամությունը և Անդրկովկասյան բոլշևիկների մարտական ղեկավար ընկեր Բերիան:

Կեցցե մեր հարազատ մեծ ու իմաստուն առաջնորդ ընկեր Ստալինը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԱՎՈՐ ԲԱՄԲԱԿԱՑԱՆՆԵՐԻ
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՑԵՐԿՐՈՐԴ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ
ՎՈՂՋՈՒՅՆՆ

## ԸՆԿԵՐ ՍՏԱԼԻՆԻՆ

## *ԹԱՆԳԱԳԻ՛Ն ԻՈՍԻՖ ՎԻՍՍԱՐԻՈՆՈՎԻՉ*

*Մենք՝ Հայաստանի բամբակի դաշտերի ստախանովականներս, հավաքվելով բամբակացանների յերկրորդ հանրապետական խորհրդակցությանը, Ձեզ՝ հաղթական սոցիալիզմի մեծ ղեկավարին, ժողովուրդների յերջանկության մեծ խարտիայի—Խորհրդային Սահմանադրության ստեղծողին՝ հղում ենք մեր կոլտնտեսային սրտաբուխ ողջույնը։*

*Դեռ մի տարի առաջ Ուզբեկստանի Կոմկուսակցության Կենտկոմի քարտուղար ընկեր Իքրամովը Կրեմլում՝ Ուզբեկստանի պատվիրակության ընդունելության ժամանակ հայտարարեց, վոր 1935 թվականին Ուզբեկստանում բամբակի միջին բերքատվությունը կազմել ե հեկտարից 11,4 ցենտներ։ Դուք հայ աշխատավոր ժողովրդի պատվիրակության ընդունելության ժամանակ, 1935 թվի դեկտեմբերի 30-ին, ցուցում տվիք մեզ, վոր անհրաժեշտ ե լարել ուժերը և հասնել ուզբեկ բամբակացաններին։ Ձեր այդ ցուցումը մեզ համար պայքարի դրոշ դարձավ կոլտնտեսական լայն մասսաներին մոբիլիզացիայի յենթարկելու հանուն բամբակի բարձր բերքատվության։*

*1936 թվին մենք կարողացանք հեկտարից ստանալ 12,4 ցենտներ բերք՝ անցյալ տարիների ցածր բերքի փոխարեն։*

*Մեզ մոտ առանձին առաջավոր կոլտնտեսություններ, բրիգադներ և ողակներ այս տարի ավելի բարձր բերք են ստացել։ 13 կոլտնտեսություն հեկտարից ստացել են 15 ցենտներ բերք։ Հեկտարից 15 ցենտներից ավելի բերք են ստացել 28 կոլտնտեսություն, 18 ցենտներից ավելի՝ 14 կոլտնտեսություն, 21 ցենտներից ավելի՝ 8 կոլտնտեսություն։ Նրանք այդ բանին հասան իրենց լավ աշխատանքի շնորհիվ։ Ղամարլուի շրջանի Ջոհրաբլուի «Մայիսի 1-ի» անվան կոլտնտեսությունը հեկտարից միջին հաշվով ստացավ 26,3 ցենտներ բամբակ, իսկ այդ կոլտնտեսության ողակավարուհի Վարինկա Փանոսյանը յուրաքանչյուր հեկտարից ստացավ 47 ցենտներ։ Նույն շրջանի Գետազատ և Դարղալու գյուղերի կոլտնտեսությունները յուրաքանչյուր հեկտարից ստացան 24 ցենտներ։ Գետազատի կոլտնտեսության ողակավարուհի ընկ. Աշխեն Փանոսյանն իր հողամասից ստացել ե միջին հաշվով 38 ցենտներ բամբակ, իսկ առանձին հեկտարից 51 ցենտներ։ Եյլաս գյուղի Ստալինի անվան կոլտնտեսության ողակավար Ղամբար Փաշա ողլին հեկտարից ստացավ 36 ցենտներ, Ներքին Աղբաշ գյուղի «Աշխատավոր» կոլտնտեսության ողակավար Վարդան Վարդանյանը՝ 35 ցենտներ, Վաղարշապատի շրջանի «Ջահմեթ» կոլտնտեսությունը՝ 23,8 ցենտներ, նույն կոլտնտեսության ողակավար Ալի ողլի Ալիևը՝ 32 ցենտներ, Վերին Խաթունարխի կոլտնտեսության ողակավար Մուշեղ Գրիգորյանը՝ 37,4 ցենտներ, Հոկտեմբերյան շըր-*

ջանի Բախչալար գյուղի Ազիզբեկովի անվան կոլտնտեսությունը՝ 24 ցենտներ, նույն կոլտնտեսության օղակավարուհի Աբիբ Կուլի կզի Նովրուզովան՝ 36,2 ցենտներ, Վեդու շրջանի Ռեհանլու գյուղի կոլտնտեսության օղակավարուհի Թագուհի Արումյանը՝ 35 ցենտներ։ Վաղարշապատի շրջանի Արշալույսի կոլտնտեսության օղակավարուհի Թանկագին Մովսիսյանը կատարեց Ձեզ տված խոստումը՝ հեկտարից ստացավ 30 ցենտներ բամբակ։ Հոկտեմբերյան շրջանի Ջանֆիդա գյուղի «ԿԻՄ»-ի անվան կոլտնտեսության անդամ Զարուհի Մուրադյանն օրական միջին հաշվով հավաքել է 113 կիլոգրամ բամբակ, իսկ առանձին օրեր՝ 430 կիլոգրամ և ավելի. Նվջիլարի կոլտնտեսուհի Շուշանիկ Ասատրյանն օրական հավաքում եր 103 կիլոգրամ, Ներքին Խաթունարխի կոլտնտեսուհի Վարսենիկ Պողոսյանը՝ 100 կիլոգրամ։ Բամբակի բարձր բերքի համար մղվող պայքարում աճեցին տասնյակ և հարյուրավոր լավագույն ստալինյան կադրեր—բամբակի դաշտերի ստախանովականներ, վորոնք յուրացրել են նոր ագրոտեխնիկան։

Խորհրդային բամբակի համար մղվող պայքարի ամեն մի ժամում մենք ամենուրեք զգում եյինք Ձեր հայրական հոգատարությունը և ամենօրյա օգնությունը։

Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի ժողովուրդների ստալինյան ընտանիքում, անձնուեր ստալինյան Լավրենտիյ Բերիայի ղեկավարությամբ, Հայաստանի կոլտնտեսություններում կյանքը հորդում ե աղբյուրի պես. աճում ե աշխատավորների ունևորությունը։ Հաղթանակած սոցիալիզմի յերկրի ստալինյան Սահմանադրությունը սոցիալիստական մրցության նոր ալիք բարձրացրեց բամբակի բարձր բերքի համար։

Մենք՝ բամբակի բարձր բերքատվության վարպետներս պարտավորվում ենք մեր փորձը հաղորդել հետ մնացող կոլտնտեսություններին, բրիգադներին, օղակներին և 1937 թվին առանձին ռեկորդների փոխարեն ապահովել բամբակի բոլոր դաշտերի բարձր բերքատվությունը։ Մենք մեր առաջ պատվի խնդիր ենք դնում անցյալ տարվա 6400 հեկտար մեքենայական ցանքի փոխարեն այս տարի կատարել 14.000 հեկտար մեքենայական ցանք, 19.600 հեկտար կուլտիվացիայի փոխարեն՝ 56.000 հեկտար կուլտիվացիա, ձեռնարկել հողամասերի մասնավորման ու հարթման, բամբակագործական 4 շրջանները մինչև 1937 թվի վերջն ապահովել քիմիական քարտեզներով, 12.000 հեկտար ցանք պարարտացնել քիմիական պարարտանյութերով, իսկ մնացած ամբողջ տարածությունը՝ տեղական պարարտանյութերով, բամբակի բերքահավաքը կազմակերպել այնպես, վոր վոչ մի փաթիլ բամբակ չկորչի, հանձնվող բամբակի բարձր վորակն ապահովելու նպատակով ամեն մի բրիգադում բամբակի ընդունման ժամանակ հաշվի առնել չանաքողից ընդունվող բամբակի վոչ միայն քանակը, այլև վորակը և ըստ քանակական ու վորակական ցուցանիշների գնահատել աշխորերը։ Մենք մեր պատվի խնդիրն ենք համարում անթերի կիրառել ագրոկոմպլեքսը և այս տարի հասնել առաջավոր ուդարնիկների բերքատվությանը, վորոնք 1936 թվին հեկտարից ստացան 15,8 ցենտներ բամբակ։

Մեր այդ նպատակին հասնելու համար, Ձեր տված թանկագին ցուցումը կատարելու համար, մենք չենք խնայի վոչ մի ջանք, վոչ մի աշխատանք, վորովհետև մեզ համար աշխարհում չկա ավելի մեծ յերջանկություն, քան ագնվորեն, ամբողջ հոգով պայքարել Ձեր ամեն մի խոսքի, ամեն մի ցուցումի իրականացման համար, ստալինյան բերկրալից կյանքի նոր բարձունքների հասնելու համար։

Թող յերկար ապրի ու լուսավորի աշխարհը մեր արևը, մեր խնդությունը, մեր հարազատ ու մեծ Ստալինը։

**Հայաստանի առաջավոր բամբակացանների**
**հանրապետական յերկրորդ խորհրդակցություն**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԱՎՈՐ ԲԱՄԲԱԿԱՑԱՆՆԵՐԻ
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՅԵՐԿՐՈՐԴ
ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՎՈՂՋՈՒՅՆՆ

Ը Ն Կ Ե Ր   Բ Ե Ր Ի Ա Յ Ի Ն

## ԹԱՆԳԱԳԻ՛Ն ԼԱՎՐԵՆՏԻՅ ՊԱՎԼՈՎԻՉ

Հայաստանի բամբակացանների հանրապետական յերկրորդ խորհրդակցության առաջավոր ստախանովականներն իրենց բոցավառ վողջույնն են հղում Քեզ՝ Անդրկովկասի բոլշեվիկների ղեկավարիդ՝ լավագույն՛ ստալինյանիդ։

Բամբակի բարձր բերքատվության համար պայքարելով՝ 1936 թվականին մենք կարողացանք մի հեկտարից միջին հաշվով ստանալ 12,4 ցենտներ բերք։ Քիչ չեն կոլտնտեսական այնպիսի առաջավոր բրիգադներ և օղակներ, վորոնք մի հեկտարից ստացել են 30 ցենտներից ավելի բամբակ, իսկ Ղամարլուի շրջանի Ջոհրաբլու գյուղի «Մայիսի 1-ի» անվան կոլտնտեսության օղակավարուհի՝ ստախանովական Վարինկա Փանոսյանն իր հողամասի ամեն մի հեկտարից ստացավ 47 ցենտներ բամբակ։ Աճեցին հարյուրավոր ստախանովականներ՝ կոլտնտեսային բերկրալից կյանք կառուցող ստալինյան սաներ։

Այս հաջողությունները մենք ձեռք ենք բերել Քո անմիջական ղեկավարությամբ, անշեղորեն կենսագործելով մեծ Ստալինի ցուցումները։

Ե՛լ ավելի ծավալելով ստախանովյան շարժումը՝ մենք խոստանում ենք ավելի լավ աշխատել և ավելի բարձր բերք ստանալ։

Կեցցե՛ մեր հարազատ, մեծ Կոմունիստական կուսակցությունը։

Կեցցե՛ Անդրկովկասի ժողովուրդների անխախտ բարեկամությունը և Անդրկովկասի բոլշեվիկների մարտական ղեկավար ընկեր Բերիան։

Կեցցե՛ մեր հարազատ հայր, մեր իմաստուն առաջնորդ մեծ Ստալինը։

**Հայաստանի Առաջավոր բամբակացանների**
**հանրապետական յերկրորդ խորհրդակցություն**

# ԳԱՐՆԱՆԱՑԱՆԻՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎԵԼՈՒ ՁԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

## ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԺՈՂԿՈՄԽՈՐՀԻ ՅԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ Կ(բ)Կ ԿԵՆՏԿՈՄԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

Հայկական ԽՍՀ Ժողկոմխորհը և ՀԿ(բ)Կ Կենտկոմը նշում են գարնանացանին նախապատրաստվելու անբավարար ընթացքը։

Չնայած հանրապետության մեջ սերմֆոնդի առանձնացման պլանի կատարմանը (մինչև 1936 թ. դեկտեմբերի 25-ն առանձնացված է յեղել 283.964 ցենտներ—պլանի 101,9 տոկոսը), առանձին շրջաններ չեն կատարել սերմֆոնդի առանձնացման պլանը (Ալլահվերդի - 78,1 տոկոս, Ախտա—78,8 տոկոս, Ղափան—74,9 տոկոս, Միկոյան—84,9 տոկոս, Մեղրի—89,9 տոկոս, Ն. Բայազետ—80,8 տոկոս և այլն)։

Առանձնացված սերմացուից մինչև դեկտեմբերի 25-ը զտված է յեղել միայն 97.008 ցենտներ—պլանի 35,6 տոկոսը։ Մի շարք շրջաններ (Ապարան, Ախտա, Դիլիջան, Միկոյան, Սիսիան) բնավ չեն ձեռնարկել սերմացուի զտումը։

Ստուգված սերմացուից վոչ կոնդիցիոն դուրս է յեկել 50 տոկոսը, վոր վկայում է սերմացուի զտման ցածր վորակի մասին։

Տրակտորների աշնան-ձմեռվա վերանորոգումն ընթանում է ծայրահեղորեն անբավարար։

Շրջանների մեծ մասում կոլտնտեսային գյուղատնտեսական գործիքների վերանորոգումը թույլ է ընթանում։ Կոլտնտեսային դարբնոցներն ու ՄՏԿայանների արհեստանոցներն ապահովված չեն համապատասխան նյութերով ու պահեստի մասերով։

Գարնանացանը լավագույն կերպով նախապատրաստելու և նրա բարձր վորակային ցուցանիշների կատարումն ապահովելու համար Հայկական ԽՍՀ Ժողկոմխորհը և ՀԿ(բ)Կ Կենտկոմը վորոշում են.

Առաջարկել Հողժողկոմատին, շրջգործկոմներին, կուսակցության շրջկոմներին, շրջանային հողբաժինների վարիչներին և ՄՏԿայանների դիրեկտորներին.

## 1. ՍԵՐՄԱՑՈՒԻ ԳԾՈՎ

ա) Մինչև 1937 թվականի հունվարի 10-ը կատարել սերմֆոնդերի առանձնացման և նրա վորակի ու պահպանման պայմանների համատարած ստուգում, հատուկ ուշադրություն նվիրելով մասսայական ընտրության միջոցով առանձնացված սերմացուին.

բ) սերմֆոնդերի լաբորատորիական առաջին ստուգումն ավարտել մինչև 1937 թվականի հունվարի 10-ը, յերկրորդը՝ մինչև փետրվարի 15-ը, յերրորդը (նախացանքային)՝ գարնանացանն սկսելուց 20 որ առաջ.

գ) առանձնացված սերմֆոնդի լավ և անխաս պահպանման պատասխանատվությունը դնել անձամբ կոլտնտեսությունների նախագահների վրա.

դ) լաբորատորիական անալիզի համար սերմերի նմուշներ ընտրել բացառապես շրջանային հողբաժնի և ՄՏկայանի ագրոնոմների միջոցով.

ե) սերմֆոնդերի անալիզի արդյունքները վերջնականապես պարզվելուց հետո կազմակերպել վոչ կոնդիցիոն սերմացուի միջշրջանային և միջկոլտնտեսային փոխանակություն՝ կոնդիցիոն սերմացվով.

զ) առաջարկել Հողժողկոմատին՝ 10 օրվա ընթացքում ձեռնարկումներ մշակել կարտոֆիլի, գանգրավուշի ու առվույտի պակասող սերմացուի հայթայթման ու ներմուծման ուղղությամբ և այդ ձեռնարկումները ներկայացնել Ժողկոմխորհին, միաժամանակ կազմակերպել կոլտնտեսություններում յեղած վուշի բոլոր ֆոնդերից գանգրավուշի սերմացուն ձեռքով ընտրելու գործը.

է) յուրաքանչյուր կոլտնտեսության մեջ առանձնացնել սերմացուի հատուկ հողամասեր՝ ընտիր սերմացու ցանելու համար—աշնանացան ցորեն՝ 12 տոկոս, վարսակ, գարի և հաճար՝ 13 տոկոս, գարնանացան ցորեն՝ 15 տոկոս—այդ կուլտուրաների ցանքի տարածության համեմատությամբ.

ը) առաջարկել շրջանային սերմնաբուծական լաբորատորիաներին՝ լրացուցիչ կերպով ստուգել այդ սերմերի որակը և թույլ տալ ցանելու միայն այն դեպքում, յերբ սերմերը 100 տոկոսով կոնդիցիոն կլինեն.

թ) սերմացուի հողամասերը տեղավորել ցանքաշրջանառության դաշտերում և մոլախոտերից ազատ հողերում, գարնանացանի կուլտուրաները ցանել ամբողջապես աշնանավար կատարված հողամասերում, շարքացանով:

## 2. ՅԱՐՈՎԻԶԱՑԻԱՅԻ ԳԾՈՎ.

1. Գարնանացան հացահատիկային կուլտուրաների յարովիզացիայի ընդհանուր տարածությունը 1937 թվականի համար հաստատել 30 հազար հեկտար:

2. Առաջարկել Հողժողկոմատին՝ 10 օրվա ընթացքում շրջաններին ուղարկել յարովիզացիայի պլանները:

3. Լենինականի հանրապետական փորձագիտական-սելեկցիոն կայանին կից կազմակերպել ագրոնոմ-յարովիզատորների 10-օրյա դասընթացներ:

## 3. ՏՐԱԿՏՈՐՆԵՐԻ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԳԾՈՎ.

ա) Առաջարկել Հողժողկոմատին՝ ապահովել տրակտորների, գյուղատնտեսական մեքենաների ու ավտոտրանսպորտի աշնան-ձմեռվա վերանորոգման ուղղությամբ ՄՏկայանների կողմից կատարվող աշխատանքի անընդմեջ ֆինանսավորումը.

բ) առաջարկել Հողժողկոմատին և ՄՏկայանների դիրեկտորներին՝ 10 օրվա ընթացքում միջոցներ ձեռք առնել ՄՏկայաններն



ու կոլտնտեսությունները ներմուծելու տրակտորների ու գյուղատնտեսական մեքենաների վերանորոգման համար անհրաժեշտ բոլոր պահեստամասերը.

գ) առաջարկել շրջանային հողբաժինների վարիչներին ու ՄՏկայանների դիրեկտորներին՝ մինչև 1937 թվականի հունվարի 10-ն ստուգել կոլտնտեսությունների՝ վերանորոգման յենթակա՝ գյուղատնտեսական մեքենաների ու գործիքների վիճակը և բոլոր անհրաժեշտ միջոցները ձեռք առնել կոլտնտեսային արհեստանոցների կադրերը կոմպլեկտավորելու ուղղությամբ, այդ արհեստանոցներն ապահովելով անհրաժեշտ վերանորոգման նյութերով.

դ) առաջարկել շրջգործկոմներին և կուսակցության շրջկոմներին՝ առնվազն 10 օրը մեկ անգամ լսել շրջանային հողբաժնի վարիչի, ՄՏկայանի դիրեկտորի և առանձին կոլտնտեսությունների զեկուցումները՝ տրակտորների գյուղատնտեսական մեքենաների ու գործիքների վերանորոգման ընթացքի մասին:

## 4. ՊԱՐԱՐՏԱՑՄԱՆ ԳԾՈՎ

ա) Հաստատել Հողժողկոմատի կողմից 1937 թվականի գարնան համար ներկայացված գոմաղբամոխրային պարարտացման պլանը—3 միլիոն սայլ հետևյալ բաշխմամբ ըստ շրջանների (տես հավելվածը).

բ) պարտավորեցնել շրջհողբաժինների վարիչներին և ՄՏկայանների դիրեկտորներին՝ մինչև 1937 թվականի հունվարի 10-ը կոլտնտեսություններին հասցնել պարարտացման պլանը, ապահովելով պարարտանյութերն անհապաղ մասսայականորեն համապատասխան հողամասերը փոխադրելու գործը.

գ) հաստատել կոյաջրի հորերի ու գոմաղբի հորերի շինարարության 1937 թվականի համար Հողժողկոմատի կողմից ըստ շրջանների ներկայացրած պլանը.

դ) առաջարկել Հողժողկոմատին 5 օրվա ընթացքում հրահանգ ուղարկել շրջաններին. պարարտանյութը դաշտ փոխադրելու կարգի ու ժամկետների մասին:

## 5. ՆԻՏՐՈԳԻՆԱՑՄԱՆ ԳԾՈՎ

ա) Նկատի ունենալով 1936 թվականին լոբազգի կերաբույսերի ցանքերի նիտրոգինացման դրական արդյունքները՝ 1937 թվականին նիտրոգինացման յենթարկել լոբազգի կերաբույսերի ցանքերի ամբողջ տարածությունը.

բ) առաջարկել Հողժողկոմատին և Բժխացման կայանին՝ մինչև 1937 թվականի մարտի 15-ն ապահովել լոբազգի կերաբույսերի ցանքերի նիտրոգինացման համար անհրաժեշտ քանակությամբ նիտրոգինի պատրաստումը.

գ) առաջարկել Հողժողկոմատին առանձնացնել 20.000 ռուբլի՝ նիտրոգինացման ուղղությամբ կատարվելիք նախնական ծախսերի համար.

դ) պարտավորեցնել շրջանային հողբաժիններին և մեքենատրակտորային կայաններին՝ լոբազգի բույսերի նիտրոգինացման պլանը հասցնել մինչև առանձին կոլտնտեսային դաշտերը, ինչպես նաև ապահովել նիտրոգինի անոթները ժամանակին կոլտնտեսությունները փոխադրելու գործը:

ե) առաջարկել Գյուղհրատին՝ մինչև 1937 թվականի փետրվարի 15-ը հրատարակել նիտրոգինացման վերաբերյալ հանրամատչելի բրոշյուր:

## 6. ԿԱԴՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԳԾՈՎ

ա) Հաստատել 1937 թվականին մասսայական վորակի կադրերի պատրաստման ու վերապատրաստման՝ Հողժողկոմատի կողմից ներկայացված պլանը, ըստ շրջանների ու պրոֆիլների, հետևյալ չափով.

| | | |
|---|---|---|
| Դաշտավարական բրիգադիրներ | 1480 | հոգի |
| Ողակավարներ | 3920 | » |
| Պահեստապետներ | 855 | » |
| Վնասատուների դեմ պայքարող տեխնիկներ | 1100 | » |
| Ցանք կատարողներ | 800 | » |
| Յարովիզատորներ | 470 | » |
| Վորակի տեսուչներ | 300 | » |
| Կոլտնտեսության նախագահներ | 1000 | » |
| Տրակտորիստներ | 950 | » |
| Կոմբայնավարներ | 190 | » |
| Տնկարանային տնտեսության վարիչներ | 70 | » |
| Ծխախոտագործ-ողակավարներ | 70 | » |
| Կոլտնտեսային հաշվետարներ | 605 | » |

բ) պարտավորեցնել շրջգործկոմների նախագահներին, շրջանային հողբաժինների վարիչներին և ՄՏԿայանների դիրեկտորներին՝ անհապաղ ձեռնարկել դասընթացների կոմպլեկտավորումը, ապահովելով դասընթացներն ուսման նորմալ ընթացքի համար անհրաժեշտ պայմաններով.

## 7. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՎՆԱՍԱՏՈՒՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ԳԾՈՎ

ա) Մինչև 1937 թվականի հունվարի 15-ն ըստ առանձին շրջանների ճշտել խոնավ ու չոր ախտահանման ենթակա սերմացուի քանակը.

բ) մինչև 1937 թվականի փետրվարի 1-ը շրջաններն ապահովել բոլոր անհրաժեշտ թունանյութերով, այդ նյութերը փոխադրելով շրջանային կենտրոնները.

գ) մինչև փետրվարի 1-ը բոլոր կոլտնտեսություններն ապահովել ախտահանման համապատասխան ապարատներով.

դ) վաղ գարնանը բոլոր հողամասերը հետազոտել, իմանալու համար, թե վորքանով են վարակված մկներով, և մասսայական պայքար ծավալել մկների դեմ:

## 8. ԲԱՆՈՂ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ԽՆԱՄՔԻ ԳԾՈՎ

Նկատի առնելով բանող անասունների ծայրահեղ անբավարար վիճակը և բանող անասունները գարնանացանի կամպանիային նախապատրաստելու նպատակով, կիրառել հետևյալ ձեռնարկումները.

ա) հատուկ հանձնաժողովներ կազմել ավագ զոոտեխնիկից, շրջանային հողբաժնի ավագ ագրոնոմից, անասնաբուժից և կոլտնտեսության նախագահից բաղկացած՝ բանող անասունների վիճակն ստուգելու և նրանց կերակրման ու խնամքի համապատասխան ռեժիմ սահմանելու համար.



բ) պարտավորեցնել կոլտնտեսությունների նախագահներին՝ սահմանված ռացիոնների համաձայն, համապատասխան քանակությամբ կեր առանձնացնել ձմրան համար, ինչպես նաև կերի անձեռնմխելի ֆոնդ կազմել 1937 թվականի գարնանային աշխատանքների շրջանի համար.

գ) գարնանային աշխատանքներն սկսելուց յերեք շաբաթ առաջ կոլտնտեսությունների նախագահների, ՄՏԿայանների դիրեկտորների և շրջանային հողբաժինների վարիչների անձնական պատասխանատվությամբ արգելել բանող անասունների օգտագործումը բոլոր տեսակի տնտեսական աշխատանքներում և անասուններին լիակատար հանգիստ տալ:

## 9. ՋՐՏՆՏԵՍԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳԾՈՎ

ա) Առաջարկել Հողժողկոմատին՝ մինչև 1937 թվականի հունվարի 10-ը կազմել վոռոգման սիստեմի մաքրման ու վերանորոգման օրացուցային պլան և վոչ ուշ քան մինչև 1937 թվականի հունվարի 15-ն այդ պլանը հասցնել շրջանները.

բ) առաջարկել շրջգործկոմներին և կուսակցության շրջկոմներին՝ ապահովել աշխատանքների ժամանակին կատարումը.

գ) առաջարկել Հողժողկոմատին՝ մինչև 1937 թվականի հունվարի 20-ը Ժողկոմխորհի և Կենտկոմի քննարկմանը ներկայացնել ըստ շրջանների 1937 թվականին կատարվելիք ջրտնտեսային ձեռնարկումների ծավալուն պլանը:

## 10. ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՊԼԱՆՆԵՐԸ ԿԱԶՄԵԼՈՒ ԳԾՈՎ

Առաջարկել Հողժողկոմատին՝ մինչև 1937 թվականի հունվարի 20-ը շրջաններն ապահովել այն ամենով, ինչ անհրաժեշտ է արտադրական պլաններն ու մուտքի-ելքի նախահաշիվները կազմելու համար, ինչպես նաև արտադրական պլանների ու մուտքի-ելքի նախահաշիվների բլանկների ձևերով, ազգային փոքրամասնությունների կոլտնտեսությունները (ռուսական, թուրքական, քրդական) ապահովելով մայրենի լեզվով տպված բլանկներով:

Արտադրական պլաններն ու մուտքի-ելքի նախահաշիվները կազմելու աշխատանքն ավարտել վոչ ուշ քան մինչև 1937 թվականի փետրվարի 20-ը:

**Առաջարկել կուսակցության շրջկոմներին, շրջգործկոմներին, շրջանային հողբաժիններին և ՄՏԿայաններին.**

ա) կոլտնտեսություններում կազմակերպել պլանային ցուցանիշների լայն քննարկումը բրիգադիրների և կոլտնտեսային ակտիվի արտադրական խորհրդակցություններում ու կոլտնտեսականների ընդհանուր ժողովներում:

բ) անհապաղ ձեռնարկել կոլտնտեսություններում 1937 թվականի արտադրանքի նոր նորմաների ու աշխատանքների գնահատումների քննարկումը, լայնորեն օգտագործելով բերքատվության առաջավոր ստախանովականների փորձը:

## 11. ԱԳՐՈԿԱՆՈՆՆԵՐԻ ԳԾՈՎ

Առաջարկել շրջգործկոմներին, կուսակցության շրջկոմներին, ՄՏկայաններին և շրջանային հողբաժիններին.

ա) ոչ ուշ 1937 թվականի հունվարի 15-ից կազմել տվյալ շրջանի ագրոկանոնները և ներկայացնել Հողժողկոմատի քննարկմանը.

բ) առաջարկել Հողժողկոմատին՝ ոչ ուշ քան մինչև 1937 թվականի փետրվարի 1-ը քննության առնել շրջգործկոմների ներկայացրած ագրոկանոնները և հասցնել դրանք շրջաններին, իսկ շրջգործկոմներին առաջարկել՝ ոչ ուշ 1937 թվականի փետրվարի 15-ից այդ ագրոկանոնները հրատարակել պարտադիր որոշման կարգով և քննության առնել կոլտնտեսություններում ու գյուղխորհուրդներում.

գ) սահմանել, որ 1937 թվականի ագրոկանոնները պետք է կազմվեն ըստ յուրաքանչյուր կուլտուրայի, ամբողջ տարվա և բոլոր աշխատանքների համար, կոնկրետացվելով ըստ յուրաքանչյուր յենթաշրջանի և կոլտնտեսության հողային ու կլիմայական առանձին պայմանների։

## 12. ԾԽԱԽՈՏԻ ՅԵՎ ՃԱԿՆԴԵՂԻ ԳԾՈՎ

1. Պարտավորեցնել Հողժողկոմատին, Իջևանի, Կոտայքի, Ղափանի, Բասարգեչարի, Միկոյանի, Շամշադինի, Ալլահվերդու, Աշտարակի, Լենինականի, Արթիկի և Կիրովականի շրջկոմների քարտուղարներին, շրջգործկոմների նախագահներին, շրջանային հողբաժիններին ՄՏկայանների դիրեկտորներին.

ա) մինչև 1937 թվականի հունվարի 10-ն ստուգել և վերջնականապես հաստատել ծխախոտի ու ճակնդեղի համար առանձնացված հողերը։ Սահմանել, որ այդ կուլտուրաների համար հատկացված հողամասերը պետք է աշնանավար արված լինեն և ապահովված լինեն վոռոգման ջրով.

բ) առաջարկել Հողժողկոմատին՝ ապահովել 1012 հեկտար ծխախոտի ցանքի պարարտացումը 412 տոնն պարարտանյութով, և 800 հեկտար շաքարի ճակնդեղի ցանքի պարարտացումը 1497 տոնն պարարտանյութով։

Հանձնարարել Հողժողկոմատին և Կենտկոմի Գյուղատնտեսական բաժնին՝ 10 օրվա ընթացքում Ժողկոմխորհի և Կենտկոմի քննարկմանը ներկայացնել 1937 թվականին բամբակի ցանքի նախապատրաստման ուղղությամբ կիրառվելիք կոնկրետ ձեռնարկումների պլանը։

Ժողկոմխորհը և Կենտկոմը պահանջում են կուսակցության շրջկոմներից, շրջգործկոմներից, Հողժողկոմատից և բոլոր հողային մարմիններից՝ հատուկ ուշադրություն նվիրել գարնանացանի կամպանիայի նախապատրաստությանը, այս որոշումը քննարկել կուսակցության շրջկոմների, շրջգործկոմների նիստերում, կոլտնտեսությունների ու գյուղխորհուրդների ժողովներում և մատնանշված ձեռնարկումների կիրառմամբ ապահովել 1937 թվականի բարձր բերքը։

Հայկական ԽՍՀ Ժողկոմխորհի նախագահ՝ Ա. ԳՈՒԼՈՅԱՆ

ՀԿ (բ)Կ Կենտկոմի քարտուղար՝ ԱՄԱՏՈՒՆԻ



# 1937 ԹՎԱԿԱՆԻ ԲԱՄԲԱԿԻ ՑԱՆՔԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ՁԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

## ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԺՈՂԿՈՄԽՈՐՀԻ ՅԵՎ ՀԿ(բ)Կ ԿԵՆՏԿՈՄԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

Հայկական ժողկոմխորհը և ՀԿ(բ)Կ Կենտկոմը նշում են, վոր Հողժողկոմատի, շրջանային կուսակցական կազմակերպությունների և հողային որգանների աշխատանքում գոյություն ունի վորոշ հանգստացում 1937 թվականի գարնան բամբակի ցանքի կամպանիայի նախապատրաստման ասպարեզում։

Բամբակացան մեքենատրակտորային կայանները ձգձգել են տրակտորային պարկի նորոգումը։ Առ 15-ը հունվարի Հոկտեմբերյանի մեքենատրակտորային կայանում նորոգումը կատարվել է 15,5 տոկոսով, Ղամարլուի ՄՏԿ-ում՝ 36,7 տոկոսով, Արարատի ՄՏԿ-ում՝ 28,6 տոկոսով, իսկ Վաղարշապատի ՄՏԿ-ում հանձնաժողովը դեռ վոչ մի տրակտոր չի ընդունել (նորոգվածներից)։

Տրակտորների հետ միասին մեծ չափով հետ է մնում նաև ՄՏԿ-ների կցորդ ինվենտարի (տրակտորային գութաններ) ու ավտոմեքենաների նորոգումը։

Բամբակի ցանքի նախապատրաստման ընթացքում կրկնվում են այն սխալները, վորոնք թույլ են տրվել 1936 թվականի ցանքի կամպանիայի նախապատրաստման շրջանում (ՄՏԿ-ների ապահովված չլինելը պահեստի մասերով և նորոգման նյութերով, քիմիական պարարտանյութերի չփոխադրվելը և այլն)։

Վառելանյութերի ստացումը և հանքային պարարտանյութերը պահեստներից կոլտնտեսություններ փոխադրելը նույնպես անբավարար են ընթանում. առ 15-ը հունվարի վառելանյութի ստացման պլանը ՄՏԿ-ները կատարել են միայն 16,4 տոկոսով, քիմիական պարարտանյութերի փոխադրման պլանը՝ 40 տոկոսով։

Չի կատարվել նաև Կենտկոմի այն վորոշումը, վոր պահանջում է ազատել դաշտերը բամբակենու մնացորդներից։

Այս բոլորը, աշնանավարի վատ ցուցանիշների հետ միասին (7000 հեկտար՝ նախատեսված 18 հազար հեկտարից), 1937 թվականի գարնանացանի մյուս նախապատրաստական ձեռնարկումների անբավարար կիրառման պայմաններում, սպառնալիք են ստեղծում գարնան բամբակի ցանքը սահմանված ժամկետներին և ագրոտեխնիկական բարձր մակարդակով կատարելու գործի համար։

Նշելով, վոր բամբակին հատկացված հողերի աշնանավարի պլանի թերակատարումը կարելի յե հատուցել մի շարք ագրոտեխնիկական ձեռնարկումներով, բամբակի ցանքի կամպանիան կազմակերպված ու ժամանակին կատարելու և բամբակի բերքը բարձացնելու համար Հայկական ժողկոմխորհը յեվ ՀԿ(բ)Կ Կենտկոմը վորոշում են.

## ՏՐԱԿՏՈՐՆԵՐԻ ՆՈՐՈԳՄԱՆ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

1. Առաջարկել Հողժողկոմատին՝ միջոցներ ձեռք առնել ժամանակին արագացնելու տրակտորների, ավտոմեքենաների և այլ գյուղատնտեսական մեքենաների նորոգման ընթացքը, խստիվ սահմանելով յուրաքանչյուր մեքենատրակտորային կայանի համար հնգօրյա առաջադրանքներ, այն հաշվով, վոր տրակտորների և կցորդ ինվենտարի նորոգումը լրիվ ավարտվի ամենաուշը մինչև փետրվարի 20-ը:

2. ՄՏԿ-ներին կոնկրետ տեխնիկական օգնություն ցույց տալու համար Հողժողկոմատից ՄՏԿ-ները գործուղել մեխանիզատոր ինժեներներ, ամրացնելով նրանց ՄՏԿ-ներին:

3. Առաջարկել «ԳՈՒՏԱՊԻ» Հայաստանի բաժանմունքին՝ ամենակարճ ժամանակամիջոցում բերել տալ թե տրակտորների և թե ավտոմեքենաների պակասող մասերը, այն հաշվով, վոր մեքենայական ամբողջ պարկը նորոգված և կատարելապես պատրաստ լինի սահմանված ժամկետին:

4. Հանձնարարել կուսակցության շրջկոմների քարտուղարներին՝ ամենորյա վերահսկողություն սահմանել տրակտորների և այլ գյուղատնտեսական մեքենաների նորոգման ընթացքի վրա և ապահովել նորոգման պլանի բարձրորակ կատարումը:

## ՍԵՐՄԱՑՈՒԻ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

1. Պարտավորեցնել բամբակի տրեստի Հայաստանի բաժանմունքին մինչև փետրվարի 20-ն անհրաժեշտ քանակությամբ սերմացու փոխադրել մթերման կայանները և մարտի 5-ից վոչ ուշ սերմացուն բաժանել ցանքաբարներին:

2. Առաջարկել Հողժողկոմատին՝ ապահովել գործարաններից մթերման կայաններն ուղարկվող սերմացուի յուրաքանչյուր պարտիան վկայականներով, իսկ մթերման կայաններին առաջարկել յուրաքանչյուր կոլտնտեսությունն ապահովել ստացած սերմերի վորակը բնորոշող վկայականներով:

3. Առաջարկել շրջգործկոմների նախագահներին, կուսակցության շրջկոմներին, ՄՏԿ-ների դիրեկտորներին և շրջանային հողբաժինների վարիչներին՝ Հողժողկոմատի մթերած սերմացուի նմուշների հիման վրա բոլոր կոլտնտեսություններում կազմակերպել սերմացուի՝ տվյալ սորտի համար վոչ տիպիկ սերմերից, ինչպես և վատ սերմերից ու կարաշիգիտից ձեռքով զտելու գործը, բոլոր բրիգադներում սահմանելով սերմացուի զտման ընթացքի ճիշտ հաշվառում:

4. Առաջարկել Հողժողկոմատին՝ մինչև փետրվարի 1-ը սահմանել ցանքի մի հեկտարի նորմաները՝ ըստ բուսաբանական յինթատեսակների ու ռեպրոդուկցիաների:

5. Առաջարկել Հողժողկոմատին՝ մինչև փետրվարի 1-ը Հայաստանի Ժողկոմխորհին և ՀԿ(բ)Կ Կենտկոմին ներկայացնել սերմնաբուծական կոլտնտեսություններում բամբակի ցանքը կատարելու պլանը, ինչպես ըստ առանձին բուսաբանական յինթատեսակների, այնպես էլ ըստ առանձին ռեպրոդուկցիաների:



## ՀՈՂԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

1. Բամբակի ցանքի համար հողային տարածություններ նախապատրաստելու և ջրօգտագործման ռացիոնալ սիստեմ կազմակերպելու նպատակով, սահմանել բամբակի հողամասերի պլանավորման՝ գարնան հետևյալ պլանը.

Հոկտեմբերյան շրջ. 600 հեկտար
Ղամարլուի շրջ. 400 հեկտար
Վաղարշապատի շրջանում 300 հեկտար
Վեդու շրջանում 200 հեկտար
Ընդամենը 1500 հեկտար

2. Առաջարկել Հողժողկոմատին՝ ապահովել բոլոր բամբակացան ՄՏԿ-ները համապատասխան քանակությամբ մեքենաներով ու գործիքներով, ինչպես և պատրաստել ՄՏԿ-ներում տրակտորային 20 մալ պլանավորման աշխատանքների համար, այդ թվից.

Հոկտեմբերյանում 7, Ղամարլվում 5, Վաղարշապատում 5, Վեդիում 3, մատակարարելով ՄՏԿ-ներին անհրաժեշտ գծանկարներ՝ դրանք պատրաստելու համար:

3. Առաջարկել շրջանային հողբաժինների վարիչներին և ՄՏԿ-ների դիրեկտորներին՝ մինչև փետրվարի 1-ն առանձնացնել գարնանը պլանավորման յենթակա հողամասերը, վորոնք հերկել առաջին հերթին:

Պլանավորման աշխատանքների կատարման հետ միաժամանակ մյուս հողամասերում կիրառել հետևյալ ձեռնարկումները.

ա) արմատահանել մասսիվների ներսում գտնվող հին կոճղերը.

բ) վոչնչացնել հին առուները, թմբերը, միջնակները և դաշտային ավելորդ ճանապարհները.

գ) բոլոր հողամասերում նոր կամուրջներ կառուցել խոշոր ջրանցքների ու բաշխիչ առուների վրա և նորոգել հները:

4. Պարտավորեցնել ՄՏԿ-ների դիրեկտորներին՝ բոլոր տրակտորաքարշ գութաններն ապահովել դիսկային դանակներով, պաշտպանիչներով և «զիգզագ» ցաքաններով:

5. Առաջարկել ՄՏԿ-ների դիրեկտորներին՝ փետրվարի 20-ից վոչ ուշ կազմել յուրաքանչյուր տրակտորային բրիգադի և յուրաքանչյուր առանձին տրակտորի դիսպետչերային մարշրուտը, վորպեսզի գարնան դաշտային աշխատանքների ժամանակ կատարելապես վերացվեն տրակտորների պարապուրդները, նվազագույն չափի հասնի ավելորդ յերթևեկությունը, բարձրանա տրակտորների արտադրողականությունը, նվազի ինքնարժեքը և վառելանյութի ծախսումը, դրանով իսկ ապահովելով բամբակացան շրջանների ՄՏԿ-ների՝ շահաբեր աշխատանքի անցնելը:

## ՑԱՆՔԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

1. Տրակտորային ցանքի պլանը սահմանել 7000 հեկտար: Առաջարկել Հողժողկոմատին՝ մինչև 1937 թ. փետրվարի 1-ը պլանի բաշխումն ըստ շրջանների ներկայացնել Կենտկոմին ի հաստատություն:

2. 1937 թվականին բամբակի ցանքը 70 սանտիմետր շարամեջ տարածությամբ և միաժամանակ ակոսների փորմամբ ապահովելու համար առաջարկել Հողժողկոմատին մինչև փետրվարի 1-ը պատրաստել ակոսարար տրակտորաքարշ շարքացանների փորձնական նմուշ և մինչև փետրվարի 5-ը փորձարկել այդ, վորպեսզի մինչև մարտի 15-ը ՄՏԿ-ների բոլոր տրակտորային շարքացաններն ապահովված լինեն ակոսարարներով:

3. Մինչև մարտի 15-ը տեղերում ստուգել բոլոր տրակտորաքարշ շարքացանները և սարքել դրանք ցանքի պահանջվող նորմայի համաձայն:

Առաջարկել ՄՏԿ-ի դիրեկտորներին՝ նախքան տրակտորային շարքացանները դաշտ դուրս բերելը յուրաքանչյուր ագրեգատն ապահովել անհրաժեշտ քանակությամբ պահեստի մասերով:

## ՎՈՌՈԳՄԱՆ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

1. Առաջարկել Հողժողկոմատին և շրջգործկոմներին՝ մինչ վոռոգման կամպանիան սկսելն ավարտել վոռոգիչ ցանցի սարքավորումը, ջրաբաշխների, շլյուզների և այլ մասերի նախապատրաստումը՝ կոլտնտեսային առուներին անխափան կերպով ջուր մատակարարելն ապահովելու համար:

2. Առաջարկել Հողժողկոմատին՝ մինչև մայիսի 15-ը հրատարակել մի ժողովուր՝ ակոսային վոռոգման տեխնիկայի և նրա կիրառման մասին:

3. Վոռոգիչ ցանցի մաքրումն ու նորոգումն ավարտելու ժամկետ սահմանել մարտի 15-ը, հիմնական նորոգման համար՝ մինչև ապրիլի մեկը, իսկ ջրհան կայանների նորոգման համար՝ մարտի 15-ը:

4. Առաջարկել Հողժողկոմատին՝ շրջանային կազմակերպությունների հետ միասին, մինչև մարտի 15-ը վերանայել վոռոգման ներկա նորմաները, ժամկետներն ու սխեմն ըստ հողային տարբերությունների և չերտավորել դրանք ինչպես ըստ առանձին կոլտնտեսությունների, այնպես էլ ըստ առանձին բրիգադների:

## ՎՆԱՍԱՏՈՒՆԵՐԻ ԴԵՄ ՄՂՎԵԼԻՔ ՊԱՅՔԱՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

1. Գյուղատնտեսության վնասատուների դեմ պայքարելու պայուսակային ապարատների նորոգման համար սահմանել հետևյալ պլանը (քանակով).

| ՇՐՋԱՆՆԵՐ | Փոշոտիչներ | Սրսկիչներ |
|---|---|---|
| Հոկտեմբերյան . . . | 120 հատ | 240 հատ |
| Ղամարլուի . . . . | 42 » | 152 » |
| Վաղարշապատի . . | 85 » | 178 » |
| Վեդու . . . . . . . | 11 » | 24 » |
| Ընդամենը | 258 հատ | 594 հատ |



2. Առաջարկել Հողժողկոմատին՝ վնասատուների դեմ պայքարելու ապարատների նորոգման պլանը մտցնել մեքենատրակտորային կայանների գյուղատնտեսական մեքենաներն ու գործիքները նորոգելու ընդհանուր պլանի մեջ, նորոգումն ավարտելու ժամկետ սահմանելով 1937 թ. մարտի 15-ը:

3. Առաջարկել Հողժողկոմատին՝ ապահովել 250 հատ պայուսակային սրսկիչների ու տրակտորային 20 փոշոտիչների ստացումը մինչև մայիսի 1-ը և բամբակի սերմի 50 ախտահանիչ մեքենաների ստացումը մինչև ապրիլի 1-ը:

4. Նկատի առնելով նախորդ տարիների թերությունները՝ նորոգված մեքենաներն արհեստանոցից բաց թողնել միմիայն ՄՏԿ-ի արհեստանոցի վարիչի կողմից դրանք մանրազնին ստուգելուց հետո:

5. Առաջարկել Հողժողկոմատին՝ մինչև փետրվարի 1-ը պարզել, թե գյուղատնտեսության վնասատուների դեմ պայքարելու ապարատների համար անհրաժեշտ պահեստի մասերի ինչպիսի պահանջ ունեն բամբակացան շրջանները և ապահովել այդ պահանջի բավարարումն ամենաուշը մինչև մարտի 1-ը:

Հանձնարարել Հողժողկոմատին՝ մինչև սույն թվի փետրվարի 1-ն ապահովել 30—35 միլիմետր տրամագիծ ունեցող մի տոնն պղնձե ձողերի ստացումը և 8×12 միլիմետր պղնձե խողովակների ստացումը՝ ՄՏԿ-ների արհեստանոցներում գյուղատնտեսության վնասատուների դեմ պայքարելու ապարատների դեֆիցիտային պահեստի մասը պատրաստելու համար:

6. Շրջանները փոխադրվող ապարատների իրացումը կատարել բացառապես իրենց՝ ՄՏԿ-ների հայեցողությամբ, ապահովելով դրանցով նախ և առաջ Վաղարշապատի շրջանի կոլտնտեսությունները, Զանգիբասարի խմբի և Մերձարաքյան խմբի թույլ հանդերձված կոլտնտեսությունները:

7. Առաջարկել Հողժողկոմատին՝ մինչև մարտի 1-ն ապահովել 66 տոնն արսենատակալցիումի, 6 տոնն ֆորմալինի և 100 տոնն էմուլսոյլի ստացումը, բամբակենու վնասատուների ու հիվանդությունների դեմ պայքարելու համար (սովկա, կարադրին, ըլիճ), իսկ վոստայնի տզի դեմ պայքարելու համար 810 տոնն ծծումբն ստանալ մինչև ապրիլի 1-ը՝ պոլիսուլֆիտ-կալցիումի անխափան պատրաստումն ապահովելու համար:

8. Առաջարկել Հողժողկոմատին՝ պոլիսուլֆիտ-կալցիումի պատրաստումը հանձնարարել Գյուղմատի սիստեմին, պարտավորեցնելով նրան ամեն կերպ մեքենայացնել պոլիսուլֆիտ-կալցիումի պատրաստման բոլոր պրոցեսները:

9. Հանձնարարել ՄՏԿ-ների դիրեկտորներին՝ անձամբ ստուգել, թե ինչ չափով են կոլտնտեսություններն ապահովված հումողից ախտահանելու նյութերով:

## ՀՈՂԱՅԻՆ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԱՐՏԱՑՄԱՆ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

1. Սահմանել բամբակի հողային տարածությունները քիմիական ու տեղական պարարտանյութերով պարարտացնելու հետևյալ պլանը՝ ըստ շրջանների.

| ՇՐՋԱՆՆԵՐ | Հանքային պարարտանյութեր | Տեղական պարարտանյութեր | Այդ թվից գոմաղբ |
|---|---|---|---|
| Հոկտեմբերյանի . . . . | 4400 հեկտար | 2100 հեկտար | 5000 տոնն |
| Վաղարշապատի . . . . . | 3200 » | 1600 » | 6500 » |
| Ղամարլուի . . . . . . | 3300 » | 1600 » | 6500 » |
| Վեդու . . . . . . . . . | 1100 » | 700 » | 6000 » |
| Ընդամենը | 12000 հեկտար | 6000 հեկտար | 24000 տոնն |

2. Առաջարկել ՄՏԿ-ների դիրեկտորներին և շրջանային հողբաժիններին՝ պարարտանյութերը կոլտնտեսությունների միջև բաշխել գոյություն ունեցող քիմիական քարտերի հիման վրա և առանձին կոլտնտեսությունների համար ընդունված պարարտացման նորմաներով։

3. Առաջարկել շրջգործկոմներին և կուսակցության շրջկոմներին՝ հատուկ ուշադրություն նվիրել հանքային պարարտանյութերի այն կորուստների դեմ պայքարելուն, որ տեղի յեն ունենում այդ նյութերը պահեստներում պահելիս, կոլտնտեսություններն ուղարկելիս և դաշտերը փոխադրելիս։

4. Ինչպես Գյուղմատի, այնպես էլ կոլտնտեսության պահեստներից առանձին բրիգադներին հանքային պարարտանյութերը բաց թողնել բացառապես կշռով։

5. Պարտավորեցնել շրջգործկոմներին, ՄՏԿ-ների դիրեկտորներին և շրջանային հողբաժինների վարիչներին՝ բոլոր կոլտնտեսությունների գոմերին կից կազմակերպել աղբանոցներ՝ հեղուկ աղբի ավազաններով, ինչպես և կոմպոստի ու արտաթորությունների պահեստներ։ Առաջարկել Հողժողկոմատին՝ ամենաուշը մինչև փետրվարի 1-ը տեղերը հասցնել աղբանոցների կազմակերպման հրահանգը։

6. Առաջարկել շրջգործկոմներին, կուսակցության շրջկոմներին և ՄՏԿ-ների դիրեկտորներին՝ մինչև փետրվարի 1-ն ապահովել ամբողջ առկա հանքային պարարտանյութերը Գյուղմատի պահեստներից կոլտնտեսությունները փոխադրելու գործը, ինչպես և ապահովել պարարտանյութերը ժամանակին կոլտնտեսությունները փոխադրելու գործը՝ Գյուղմատի պահեստներում ստացվելուն զուգընթաց։

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԳՐՈ-ԿԱՆՈՆՆԵՐԻ, ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՊԼԱՆՆԵՐԻ ՅԵՎ ՅԵԼՔԻ ՈՒ ՄՈՒՏՔԻ ՆԱԽԱՀԱՇԻՎՆԵՐԻ ԿԱԶՄԵԼԸ

1. Առաջարկել շրջգործկոմների նախագահներին, կուսակցության շրջկոմներին, ՄՏԿ-ների դիրեկտորներին և շրջանային հողբաժինների վարիչներին՝ մինչև գարնան աշխատանքներն սկսվելը բոլոր կոլտնտեսություններում կազմակերպել ստուգում, թե ինչ չափով ճիշտ են կազմվել բրիգադները և հողամասերն ամրացվել առանձին բրիգադներին ու օղակներին, թե ինչ չափով ճիշտ է կիրառվում անհատական գործավարձն օղակներում, և կոնկրետ օգնություն ցույց տալ այն կոլտնտեսություններին, վորոնք հետ



են մնացել աշխատանքի հաշվառումն ու նորմավորումը բարելավելու գործում։

Առաջարկել շրջգործկոմներին և կուսակցության շրջկոմներին՝ մինչև փետրվարի 20-ը հաստատել և Հողժողկոմատի կարգադրությամբ հրատարակել բամբակի պարտադիր ագրոկանոններ՝ հայերեն ու թուրքերեն, թե ամբողջ շրջանի և թե առանձին կոլտնտեսությունների համար, հաշվի առնելով նրանց հողային տարբերությունները և բամբակի տեսակները։

3. Կոլտնտեսություններում կազմակերպել ագրոկանոնների լայն քննարկում՝ բրիգադների ու կոլտնտեսային ակտիվի արտադրական խորհրդակցություններում և կոլտնտեսականների ընդհանուր ժողովներում։

4. Բոլոր կոլտնտեսություններում կազմակերպել արտադրանքի նորմաների և 1937 թ. աշխատանքի գնահատումների քննարկումը, լայնորեն օգտագործելով բերքատվության առաջավոր ստախանովականների փորձը։

5. Առաջարկել Հողժողկոմատին՝ 1937 թ. հունվարի 25-ից վոչ ուշ բամբակացան շրջաններին ուղարկել անհրաժեշտ ցուցանիշներ՝ կոլտնտեսությունների արտադրական պլանները և յելքի ու մուտքի նախահաշիվները կազմելու համար, այն հաշվով, վոր հերոհիշյալ պլանների քննարկումը և ընդունումն ավարտվի 1937 թ. փետրվարի 29-ից վոչ ուշ։

6. Հաստատել գարնան կամպանիայի համար մասսայական պրոֆեսիաների կադրեր նախապատրաստելու հետևյալ պլանը.

| | |
|---|---|
| Ցանքարար . . . . . . . . . . . . . . . . . | 120 հոգի |
| Օղակավար . . . . . . . . . . . . . . . . . | 120 » |
| Վոռոգող . . . . . . . . . . . . . . . . . . | 320 » |
| Ունիվերսալիստ . . . . . . . . . . . . . . | 60 » |

Պարտավորեցնել Հողժողկոմատին, շրջգործկոմներին, շրջանային հողբաժիններին և ՄՏԿ-ներին՝ հավաքագրել համապատասխան թվով դասատուներ և ունկնդիրներ ու ապահովել վերոհիշյալ դասընթացների անխափան պարապմունքները։

Ժողկոմխորհը և Կենտկոմը Հողժողկոմատի, շրջանային կուսակցական կազմակերպությունների, ՄՏԿ-ների, հողային օրգանների ու կոլտնտեսությունների վարչությունների ուշադրությունն են հրավիրում բամբակի ցանքի նախապատրաստման հետ մնալու վրա, վերոհիշյալ նախապատրաստական ձեռնարկումները ժամանակին կատարելու բացառիկ նշանակության վրա՝ 1937 թվին բամբակի բարձ բերք ստանալու համար, և առաջարկում են ապահովել Ժողկոմխորհի ու Կենտկոմի այս վորոշման կատարումը սահմանված ժամկետներին։

ՀԽՍՀ Ժողկոմխորհի
Նախագահ՝ Ա. ԳՈՒԼՈՅԱՆ

ՀԿ(բ)Կ Կենտկոմի
Քարտուղար՝ ԱՄԱՏՈՒՆԻ

# 1937
# ԹՎԱԿԱՆԻ ԳԱՐՆԱՆԱՑԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՊԼԱՆԻ ՄԱՍԻՆ

## ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԺՈՂԿՈՄԽՈՐՀԻ ՅԵՎ ՀԿ(բ)Կ ԿԵՆՏԿՈՄԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

«1937 թվականի գարնանացանի պետական պլանի մասին» ԽՍՀՄ-ի Ժողկոմխորհի 1937 թվականի փետրվարի 2-ի վորոշման համաձայն, Հայկական ԽՍՀ Ժողկոմխորհը և Հայաստանի Կ(բ)Կ Կենտկոմը վորոշում են.

## I. ԳԱՐՆԱՆԱՑԱՆԻ ՊԼԱՆԻ ՄԱՍԻՆ

1. Հայկական ԽՍՀ-ի 1937 թվականի գարնանացանի պլանը հաստատել 314,8 հազար հեկտարի չափով, այդ թվում խորհտնտեսություններում՝ ԽՍՀՄ-ի Հողժողկոմատի խորհտնտեսություններ—566 հեկտար, Հայկական ԽՍՀ Հողժողկոմատի խորհտնտեսություններ—344 հեկտար, Սննդարդյունաբերության ժողկոմատի խորհտնտեսություններ—750 հեկտար, այլ ժողկոմատների, հիմնարկների և կազմակերպությունների խորհտնտեսություններ—2440 հեկտար, կոլտնտեսային հատվածում—285,7 հազար հեկտար, այդ թվում կոլտնտեսություններում—261,2 հազար հեկտար, անհատական տնտեսություններում—25,0 հազար հեկտար, հետևյալ բաշխմամբ ըստ շրջանների և կուլտուրաների (հավելված № 1)։

2. Պարտավորեցնել Հողժողկոմատին, շրջանային գործադիր կոմիտեներին և կուսակցական շրջկոմներին.

ա) յուրաքանչյուր շրջանի համար սահմանված պլանի հիման վրա գարնանացան կուլտուրաների ցանքի պլանն անհապաղ հասցնել խորհտնտեսություններին, ՄՏկայաններին, կոլտնտեսություններին և անհատական տնտեսություններին.

բ) կոլտնտեսությունների ու խորհտնտեսությունների արտադրական պլանների կազմումը և հաստատումն ընդհանուր ժողովներում ավարտել վոչ ուշ փետրվարի 25-ից, իսկ ՄՏկայանների արտադրական-ֆինանսական պլանները՝ վոչ ուշ, քան մինչև 1937 թվականի մարտի 1-ը։

## II. ՏԵՍԱԿԱՎՈՐ ՑԱՆՔԵՐԻ ՊԼԱՆԻ ՄԱՍԻՆ

1. Գարնանացան հացահատիկային կուլտուրաների տեսակավոր ցանքերի պլանը հաստատել 10,0 հազար հեկտարի չափով և կարտոֆիլինը՝ 400 հեկտար, հետևյալ բաշխմամբ ըստ շրջանների (հավելված № 2)։

2. Պարտավորեցնել Հողժողկոմատին և Մթերումների Կոմիտեյի լիազորին՝ վերոհիշյալ տարածությունը լրիվին ապահովել բարձրորակ տեսակավոր սերմացուով.

ա) վոչ տեսակավոր հացահատիկը Զագոտզեռնոյի պահեստներում յե-

ված տեսակավոր հացահատիկի հետ փոխանակելու հաշվին՝ 3000 ցենտներ.

բ) կոլտնտեսությունների սեփական տեսակավոր սերմացվի հաշվին՝ 11.266 ցենտներ:

## III. ՍԵՐՄԱՑՎԻ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Առաջարկել Հողժողկոմատին, շրջանային գործադիր կոմիտեներին և կուսակցության շրջկոմներին.

ա) յուրաքանչյուր խորհտնտեսության ու կոլտնտեսության մեջ առանձնացնել սերմացվի հողամասեր տեսակավոր և բարելավված ընտիր սերմերով ցանելու համար, հետևյալ չափով—աշնանացան ցորեն և տարեկան՝ 12 տոկոս, վարսակ և գարի՝ 13 տոկոս, գարնանացան ցորեն՝ 15 տոկոս, յեգիպտացորեն՝ 3 տոկոս, ղանդրավուշ՝ 10 տոկոս, կարտոֆիլ՝ 14 տոկոս, հաշված համապատասխան կուլտուրայի ցանքի տարածությունից.

բ) հաստատել խորհտնտեսություններում և կոլտնտեսություններում բազմամյա խոտաբույսերի սերմադաշտեր թողնելու պլանը՝ ընդամենը 3500 հեկտար, դրանից Սննդարդյունաբերության ժողկոմատի խորհտնտեսություններում՝ 100 հեկտար, Հողժողկոմատի խորհտնտեսություններում՝ 100 հեկտար, կոլտնտեսություններում՝ 3300 հեկտար, այդ թվում առվույտի՝ 1000 հեկտար և եսպարցետի՝ 2300 հեկտար:

Հայկական ԽՍՀ Ժողկոմխորհը և Հայաստանի Կ(բ)Կ Կենտկոմը նշում են, վոր սերմադաշտերի առանձնացման անցյալ տարվա պրակտիկան ցույց տվեց, վոր առանձին շրջանների մի շարք կոլտնտեսություններում սերմադաշտերի համար հատկացվել են միանգամայն պատահական հողամասեր: Սերմադաշտերի ցանքի սերմացուն ուշադիր կերպով չի ընտրվել, յերբեմն ցանքը կատարվել է վոչ կոնդիցիոն սերմացվով և սերմադաշտերի խնամքը վոչնչով չի տարբերվել սովորական ցանքերից:

Բացառիկ նշանակություն տալով սերմադաշտերի ցանքերին, վորպես 1938 թվականի համար անհրաժեշտ սերմացվի հիմնական բազա, Հայկական ԽՍՀ Ժողկոմխորհը և Հայաստանի Կ(բ)Կ Կենտկոմը խնդիր են դնում շրջանային գործադիր կոմիտեների, կուսակցության շրջկոմների, շրջանային հողբաժինների ու ՄՏԿայանների, ինչպես նաև կոլտնտեսությունների առաջ՝ 1937 թվականին սերմացվի հողամասերում հասնել բարձր բերքատվության, վորի համար պարտավորեցնել կոլտնտեսություններին, տվյալ կուլտուրայի ցանքաշրջանառության դաշտերում յեղած սերմացվի հողամասերում ցանքը կատարել բացառապես տեսակավոր և ընտիր սերմացվով, խոր հերկած աշնանավարի վրա և առավել լավ ագրոտեխնիկական ժամկետներում, հետագայում ապահովելով սերմադաշտերի ուշադիր խնամքը:

Սահմանել, վոր սերմացվի հողամասերից ստացված հացահատիկը, ղանդրավուշը և կարտոֆիլը ամբողջ բերքը պետք է լրիվին օգտագործել՝ կոլտնտեսությունները 1938 թվականի ցանքի համար անհրաժեշտ քանակությամբ լավորակ սերմացվով ապահովելու նպատակով:

Արգելել սերմացվի հողամասերից ստացված հացահատիկի, ղանդրավուշի և կարտոֆիլի օգտագործումը սերմացվից բացի վորևէ այլ նպատակի համար:



## IV. ՀԱՑԱՀԱՏԻԿԱՅԻՆ ՈՒ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐԻ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐՁՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Հանրապետության մեջ 1937 թվականի համար հաստատել բերքատվության հետևյալ ցուցանիշները, ըստ առանձին կուլտուրաների. աշնանացան ցորեն—10,6 ցենտներ, աշնանացան գարի—11,1 ցենտներ, աշնանացան տարեկան—10,0 ցենտներ, գարնանացան ցորեն—9,3 ցենտներ, գարնանացան գարի—10,5 ցենտներ, վարսակ—9,7 ցենտներ հաճար (կարմրահատ ցորեն)—8,0 ցենտներ, լոբազգի հատիկային կուլտուրաներ—7,5 ցենտներ, բրինձ—35,0 ցենտներ, կորեկ—8,8 ցենտներ, յեգիպտացորեն—12,3 ցենտներ, կարտոֆիլ—90 ցենտներ, շաքարի ճակնդեղ—180 ցենտներ, ղանդրավուշ—5 ցենտներ, բամբակ—11,2 ցենտներ, ծխախոտ—8,5 ցենտներ, հետևյալ բաշխմամբ ըստ շրջանների և կուլտուրաների (հավելված № 4):

2. Հաստատել ըստ շրջանների կոլտնտեսություններում հացահատիկային կուլտուրաների բերքատվության բարձրացման ուղղությամբ կիրառվելիք ագրոտեխնիկական ձեռնարկումների պլանը (հավելված № 5):

3. Գարնանացանն ավարտելուց հետո անհապաղ ձեռնարկել հացահատիկային կուլտուրաների ցանքի, առաջին հերթին՝ գարնանացանի քաղհանը:

Քաղհանը կատարել առնվազն 2—3 անգամ, այն հաշվով, վոր մինչև ցանքերի ցողուն գցելը լիակատար կերպով վոչնչացված լինեն բոլոր մոլախոտերը:

Քաղհանված մոլախոտերն անպայման դուրս տանել դաշտից:

Առաջարկել Հողժողկոմատին՝ տաս օրվա ընթացքում մշակել և տեղերն ուղարկել մանրամասն հրահանգ՝ աշնանացան ու գարնանացան հացահատիկային կուլտուրաները փոցխելու, դրանք լրացուցիչ կերպով պարարտացնելու և հացահատիկային կուլտուրաները փոռոցելու տեխնիկայի մասին:

## V. ՍԵՐՄԱՑՈՒՆ ՑԱՆՔԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայկական ԽՍՀ Ժողկոմխորհը և Հայաստանի Կ(բ)Կ Կենտկոմը նշում են, վոր, չնայած մի շարք ցուցումներին, կոլտնտեսությունների ստուգված սերմֆոնդի մեծ մասը դուրս է յեկել վոչ կոնդիցիոն, վորը ցույց է տալիս շրջանային կազմակերպությունների վոչ լուրջ և վատ աշխատանքը սերմացուն ցանքի համար նախապատրաստելու ուղղությամբ:

Ժողկոմխորհը և Հայաստանի Կ(բ)Կ Կենտկոմն առաջարկում են.

1. Հողժողկոմատին, շրջանային գործադիր կոմիտեներին, կուսակցության շրջկոմներին, շրջանային հողբաժիններին, ՄՏԿայաններին՝ ապահովել ամբողջ սերմացվի զտումն ու ախտահանումը, կազմակերպելով հացահատիկային, տեխնիկական ու կերի կուլտուրաների սերմացվի ֆոնդերի վորակի նախացանքային ստուգում:

2. Արգելել ցորենի, վարսակի, գարու և հաճարի (կարմրահատ ցորենի) չախտահանված սերմացվով ցանք կատարելը: Սահմանել, վոր սերմացվի ախտահանումը պետք է կատարվի գյուղատնտեսների ղեկավարությամբ, անպայմանորեն կազմելով ախտահանման վերաբերյալ ակտեր՝ կոլտնտեսության նախագահի և ագրոնոմի ստորագրությամբ:

3. Հաստատել կոլտնտեսություններում հացահատիկային կուլտուրաների յարովիզացիայի յենթարկված սերմացվով կատարվելիք ցանքի պլանը՝ 30 հազար հեկտարի չափով։

Պարտավորեցնել Հողժողկոմատին՝ կոլտնտեսություններն ապահովել յարովիզացիա անցկացնելու համար անհրաժեշտ համապատասխան քանակությամբ ապարատուրայով։ Շրջանային հողբաժիններին և ՄՏկայանի դիրեկտորներին պարտավորեցնել ժամանակին կատարել յարովիզացիայի աշխատանքները, վերջինիս նկատմամբ սահմանելով ամենօրյա հսկողություն ու ղեկավարություն։

Առաջարկել շրջանային հողբաժիններին և ՄՏկայանների դիրեկտորներին՝ յարովիզացիայի պլանը տեղերն ուղարկելիս հաշվի առնել յուրաքանչյուր առանձին կոլտնտեսության հնարավորությունները, յելնելով հնարավորին չափ մեծ թվով կոլտնտեսություններ ընդգրկելու անհրաժեշտությունից։

## VI. ՀՈՂԸ ՑԱՆՔԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Սահմանել, վոր կոլտնտեսություններում աշնանից ցրտահերկի միջոցով նախապատրաստված հողամասերը պետք և օգտագործվեն առաջին հերթին բամբակի, շաքարի ճակնդեղի, ծխախոտի և գարնանացան ցորենի ցանքերի համար։

2. Սահմանել, վոր բամբակի ցանքի նախատեսված հողամասերը պետք և գարնանը նորից հերկվեն առնվազն յերկու անգամ, յուրաքանչյուր հերկից հետո անմիջապես փոցխելով հողամասը։

Կարտոֆիլի ցանքի համար նախատեսված հողամասերը գարնանը պետք և նորից հերկվեն կամ թե յենթարկվեն կուլտիվացիայի։

3. Պարտավորեցնել շրջանային գործադիր կոմիտեների նախագահներին, շրջանային հողբաժնի վարիչներին, ՄՏկայանների ու խորհտնտեսությունների դիրեկտորներին, ինչպես նաև կոլտնտեսությունների նախագահներին՝ գարնանն ապահովել 1936 թվականին աշնանավար կատարված հողամասերի խնամքով մշակումը, ըստ վորում ծանր (կոշտացած) հողամասերում կատարված ամբողջ աշնանավարը, ինչպես նաև ուշ աշնանավարը պետք և նորից հերկվի, հետագայում փոցխելով հերկը։

Մյուս հողամասերում ամբողջ աշնանավարը պետք և կուլտիվացիայի յենթարկվի կամ թե փոցխվի, դաշտային աշխատանքներն սկսելու առաջին որերին։

4. Սահմանել, վոր յուրաքանչյուր կոլտնտեսության և խորհտնտեսության մեջ պետք և կազմակերպվի ցանքի համար նախապատրաստված ու ցանված հողամասերի ընդունումն ըստ կատարված աշխատանքի վորակի, ըստ վորում հողամասերի ընդունելությունը կոլտնտեսություններում պետք և կատարվի անմիջականորեն կոլտնտեսության նախագահի կողմից, իսկ խորհտնտեսություններում՝ ավագ գյուղատնտեսի կողմից։



## VII. ՑԱՆՔԻ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Ցորենի, վարսակի և գարու ցանքի ժամկետները հաստատել 6—9 աշխատանքային որ, իսկ աշնանավարի հողամասերում՝ 4—5 աշխատանքային որ։

2. Հաստատել գարնանացան հացահատիկային կուլտուրաների—ցորենի, վարսակի, գարու և հաճարի (կարմրահատ ցորենի), ցանքն ավարտելու վերաբերյալ, ըստ առանձին շրջանների, Հողժողկոմատի ներկայացրած ժամկետները։

3. Պարտավորեցնել շրջանային գործադիր կոմիտեներին, կուսակցության շրջկոմներին, շրջանային հողբաժիններին և ՄՏկայաններին՝ ապահովել առանձին հողամասերում հողը չորանալուն պես շարքացանն սկսելը, չսպասելով մինչև վոր չորանա բրիգադի ու, առավել ևս, կոլտնտեսության ամբողջ հողամասը։

4. Շաքարի ճակնդեղի ցանքն սկսել վաղ հասունացող հասկավոր կուլտուրաների ցանքի հետ միաժամանակ և ավարտել վոչ ուշ քան 7—9 աշխատանքային որվա ընթացքում։

Բամբակի ցանքը պետք և կատարվի առավելագույն չափով սեղմված ժամկետներում, այն և՝ 7—9 աշխատանքային որում, այն հաշվով, վոր բամբակի ամբողջ ցանքն ավարտվի վոչ ուշ մայիսի 5-ից։

5. Առաջարկել Հողժողկոմատին՝ 10 որվա ընթացքում ձեռնարկումներ մշակել առնվազն 2—3 հազար հեկտար հողամասի վրա հացահատիկային կուլտուրաների խաչաձև ցանք կազմակերպելու վերաբերյալ, և ուղարկել դրանք շրջաններին։

## VIII. ՀՈՂԻ ՊԱՐԱՐՏԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

1. 1937 թվականի գարնան գոմաղբ-մոխրային պարարտացման պլանը հաստատել 3 միլիոն սայլ։

2. Պարտավորեցնել շրջանային հողբաժինների վարիչներին, ՄՏկայանների դիրեկտորներին և կոլտնտեսությունների նախագահներին՝ ապահովել գոմաղբի ճիշտ պահպանումն ու օգտագործումը, հսկել, վորպեսզի վերջինս գոմաղբահորեր և դաշտ տարվելիս հարկ յեղած ձևով կիտվի, թույլ չտալ, վոր դաշտ փոխադրված գոմաղբն անփույթ կերպով ցիրուցան արվի ու անժամանակ փռվի, ինչպես նաև մոբիլիզացիայի յենթարկել և ժամանակին դաշտ փոխադրել տեղական պարարտանյութերի յեղած բոլոր ռեսուրսները։

Առաջարկել Հողժողկոմատին՝ ապահովել հանքային պարարտանյութերի ժամանակին փոխադրումը շրջաններ և նրանց բաշխումն ըստ կոլտնտեսությունների, այն հաշվով, վոր գարնանացանն սկսվելու մոմենտին հանքային պարարտանյութերի ամբողջ անհրաժեշտ քանակությունը լինի տեղերում։

## IX. ՋՈՒՏ ՑԵԼԻ ՀԵՐԿՈՒՄՆ ՈՒ ՄՇԱԿՈՒՄԸ

1. Կոլտնտեսություններում ջուտ ցելի հերկման պլանը հաստատել 100 հազար հեկտարի չափով, այդ թվում վաղ ցել՝ 50 հազար հեկտար, ըստ շրջանների բաշխելով № 8 հավելվածի համաձայն։

2. Վաղ ցելի հերկումն ավարտելու ժամկետ սահմանել մայիսի 1-ը։

3. Առաջարկել Հողժողկոմատին, շրջգործկոմներին, կուսակցության շրջկոմներին, շրջանային հողբաժիններին և ՄՏկայաններին՝ ջուտ ցելի հերկման պլանը, այդ թվում ցելի պլանը կոլտնտեսություններին հասցնել գարնանացանի պլանի հետ միաժամանակ։

4. Կոլտնտեսությունների նախագահները, ՄՏկայանի դիրեկտորները պարտավոր են ուշադիր խնամք ապահովել ցելի նկատմամբ, վերջինները մաքրելով մոլախոտերից, հենց որ մոլախոտերն սկսեն յերևան գալ, և կատարել առնվազն յերկու մշակություն (կուլտիվացիա և կրկնահերկ), իսկ մոլախոտերով պատած հողամասերում՝ առնվազն յերեք մշակություն։

Հայկական ԽՍՀ Ժողկոմխորհը և Հայաստանի Կ(բ)Կ Կենտկոմը նշելով շրջանների մեծ մասում գարնանացանի նախապատրաստման անբավարար ընթացքը, պահանջում են բոլոր կուսակցական ու խորհրդային կազմակերպություններից, ՄՏկայանների դիրեկտորներից, կոլտնտեսությունների վարչություններից, ապահովել 1937 թվականի գարնանացանի լրիվ ու ճշգրիտ կատարումը, առավելագույն չափով սեղմ ժամկետներում։

Հայկական ԽՍՀ Ժողկոմխորհը և Հայաստանի Կ(բ)Կ Կենտկոմը համոզված են, որ կոլտնտեսությունների բարձր բերքատվության առաջավորների փորձի ու պրակտիկայի հիման վրա, ծավալելով սոցիալիստական մրցությունն ու աշխատանքի ստախանովյան մեթոդները՝ Հայաստանի կոլտնտեսությունները 1937 թվականին կհասնեն բոլոր կուլտուրաների բերքատվության զգալի բարձրացման։

Հայկական ԽՍՀ Ժողկոմխորհի Նախագահ՝ ԳՈՒԼՈՅԱՆ

ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղար՝ ԱՄԱՏՈՒՆԻ

# ՄՏ ԿԱՅԱՆՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ-ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՄՐԱՊՆԴԵԼՈՒ ՁԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

## ՀԿ(բ)Կ ԿԵՆՏԿՈՄԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

Հայաստանի Կ(բ)Կ Կենտկոմը նշում է, որ 1936 թվականին ՄՏԿ-ները տրակտորային աշխատանքի պլանը կատարեցին 100,2 տոկոսով (վերածած փափուկ հերկի՝ 345.948 հեկտար) և մի տրակտորի բեռնավորումը հասցրին 393 հեկտարի՝ 1935 թվականի 332 հեկտարի փոխարեն։ Միաժամանակ ավելացել է մեքենայացման ծավալը և բարելավվել է կոլտնտեսությունների ագրոտեխնիկական սպասարկումը։ ՄՏԿ-ներն իրենց այդ աշխատանքով նպաստեցին գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվության բարձրացմանը 1936 թվականին։

Սակայն ՀԿ(բ)Կ Կենտկոմը դեռ անբավարար է համարում ՄՏԿ-ների տնտեսական-ֆինանսական դրությունը։

ՄՏԿ-ների դիրեկտորները միանգամայն անբավարար չափով են զբաղվում տնտեսական-ֆինանսական հարցերով, հաճախ վերավստահելով այդ գործն իրենց հաշվապահներին։

Ֆինանսական կարգապահության խախտումները, նորոգման, վառելանյութի, վարչական ծախքերի գերածախսերը, ինչպես և ՄՏԿ-ների դեբիտորային մեծ պարտքերը բնորոշ են դեռ շատ մեքենատրակտորային կայանների աշխատանքի համար։

ՄՏԿ-ների տրակտորային պարկի շահագործումն ու նորոգումն անբավարար են կազմակերպված։ Տրակտորների նորոգումն ամբողջ տարվա ընթացքում չկատարվելու և տրակտորներն ու գյուղատնտեսական մեքենաները վատ խնամվելու պատճառով ժամանակից առաջ են մաշվում։

Նորոգման արհեստանոցներն աշխատել են առանց հաստատված պլանների և առանց լրիվ բեռնավորման, որի պատճառով Հոկտեմբերյանի լավ սարքավորված ՄՏԿ-ն միմիայն միջին ու ընթացիկ նորոգման 164 հազար ռուբլու գերածախս ունի։

Սարքավորելու ինվենտարի վատ վիճակը, վառելանյութերի ծախսման դիֆերենցիալ նորմաների բացակայությունն առանձին ՄՏԿ-ներում ու բրիգադներում և վառելանյութային տնտեսության անբավարար կազմակերպումը վառելանյութի զգալի գերածախս առաջացրին ՄՏԿ-ների մեծ մասում։ Այսպես՝ առ 1-ը նոյեմբերի 1936 թվականի վառելանյութերի գերածախսը կազմում էր 450 տոնն և, բացի դրանից, բրիգադների վրա հաշվվում էր 500 տոնն, այդ թվից Ղամարլուի ՄՏԿ-ում՝ 127 տոնն (դիրեկտոր ընկ. Բոբիկյան), Ապարանի ՄՏԿ-ում՝ 42,1 տոնն (դիրեկտոր ընկ. Սարաֆյան), Գորիսի ՄՏԿ-ում՝ 24 տոնն (դիրեկտոր ընկ. Մարտիրոսյան), Արթիկի ՄՏԿ-ում՝ 29 տոնն (դիրեկտոր ընկ. Վիրապյան), Ամասիայի ՄՏԿ-ում՝ 21 տոնն և այլն։

Վերպես հետևանք այս բոլորի, մի հեկտար տրակտորային աշխատանքի միջին ինքնարժեքը բարձրացել է 6 ռուբլի 5 կոպեկով։

ՄՏԿ-ների ֆինանսական տնտեսության վրա առանձնապես անդրադարձել է բուքսիրային աշխատանքը, որովհետև կատարված աշխատանքն անշահ լինելով՝ այդ աշխատանքի ծախսերը մեծ դերածախս առաջացրին։

Կենտկոմն առանձնապես շեշտում է ՄՏԿ-ների շենքերի անբարեկարգ վիճակը (արհեստանոցները, գարաժները, գրասենյակները, տրակտորիստների, ագրոնոմների, մեխանիկների բնակարանները), դեպի շենքերն ու ծածկերը տանող ճանապարհների բացակայությունը։ Բոլոր շենքերը չեն ցանկապատված, բակերը կեղտոտ են, ՄՏԿ-ների դիրեկտորները բավականաչափ հոգատարություն չեն ցուցաբերում ՄՏԿ-ների բանվորների ու մասնագետների կուլտուրական կենցաղային պայմանների նկատմամբ։

1936 թվականին թե Հողժողկոմատը և թե ՄՏԿ-ների դիրեկտորների մեծ մասը միանգամայն անբավարար են ղեկավարել շինարարությունը։ Շինարարության որակը ցածր է եղել, հաճախ բացակայել են հաստատված նախահաշիվներ ու նախագծեր։ Շինարարության պլանը կազմվել է փոխանցվող կիսակառույց շատ օբյեկտներով։ Այսպես՝ Ղամարլուի ՄՏԿ-ի 1933 թվականից կառուցվող բնակելի տունը, որպես կիսակառույց շենք, պլանի մեջ է մտել նաև 1936 թվականին, Աշտարակի ՄՏԿ-ի նորոգման արհեստանոցը, որ կառուցվում է 1934 թվականից, 1936 թվականին պլանի մեջ է մտել նույնպես իբրև կիսակառույց շենք և այլն։

ՄՏԿ-ների մեծ մասը մինչև այժմ էլ ամենօրյա իրական օգնություն չի ցույց տալիս կոլտնտեսություններին աշխատանքի կազմակերպման ու ամբողջ արտադրական գործունեության կարգավորման ասպարեզում և հաճախ աչքաթող է անում առանձին կոլտնտեսությունների վատ աշխատանքը։

1936 թվականին դեպքեր են եղել, երբ կոմբայնների ու տրակտորների աշխատանքի և կոմպլեքսային աշխատանքի համար կոլտնտեսություններից վերցվել է կառավարության սահմանած նորմայից ավելի բնավարձ (Լենինականի ՄՏԿ դիրեկտոր ընկ. Հովսեփյան, Աշտարակի ՄՏԿ՝ ընկ. Հովհաննիսյան և այլն), որը ուղղակի արդյունք է ՄՏԿ-ների առանձին դիրեկտորների զգաստության բթացման։

Առանձին շրջկոմներ և շրջգործկոմներ (Սիսիան, Կիրովական, Ապարան) չեն թափանցել ՄՏԿ-ների տնտեսական գործունեության «մանրունքի» մեջ և անցել են ՄՏԿ-ներում կատարվող այլանդակությունների կողքով, հոգ չեն տարել ՄՏԿ-ների աշխատանքի պայմանները բարելավելու, ինչպես հարկն է չեն զբաղվել բանվորների ու ագրոկազմի մեջ կատարվող քաղաքական-մասսայական աշխատանքով և հաճախ ՄՏԿ-ի աշխատանքին վերաբերվել են որպես վարձակայանների աշխատանքի։

Հայաստանի Հողժողկոմատն իր հերթին, փոխանակ յուրաքանչյուր առանձին ՄՏԿ-ի ու արհեստանոցի աշխատանքը պլանավորելու և օպերատիվ կերպով ղեկավարելու, սահմանափակվել է ընդհանուր դրույթներ տալով և ժամանակին միջոցներ ձեռք չի առել ֆինանսական տնտեսությունը կարգավորելու համար։

## ՀԿ(Բ)Կ ԿԵՆՏԿՈՄԸ ՎՈՐՈՇՈՒՄ Է

1. Պարտավորեցնել Հողժողկոմատին, կուսակցության շրջկոմներին, շրջգործկոմներին և ՄՏԿ-ների դիրեկտորներին՝ մինչև գարնան աշխատանքների սկսվելը վերացնել վերև նշված բոլոր թերությունները և լիակատար կարգ ու կանոնի բերել ՄՏԿ-ների տնտեսությունը։



2. Առաջարկել Հողժողկոմատին՝

ա) ՄՏԿ-ների 1937 թվականի արտադրական-ֆինանսական պլանները կազմելիս նախատեսել ՄՏԿ-ների ֆինանսական տնտեսության առողջացումն ապահովող գործնական ձեռնարկումներ.

առաջարկել Հողժողկոմատին, շրջկոմներին և շրջգործկոմներին՝ ապահովել ՄՏԿ-ների աշխատանքի 1937 թվականի պլանի լայն քննարկումը ՄՏԿ-ների սկզբնական կուսկազմակերպություններում և արտադրական խորհրդակցություններում, մասնակցությամբ շրջանի առաջավոր կոլտնտեսականների ու ստախանովականների.

բ) խիստ վերահսկողություն սահմանել ՄՏԿ-ների տնտեսական ֆինանսական գործունեության վրա, վճռաբար վերացնելով այն պրակտիկան, որով ՄՏԿ-ները ֆինանսավորվում են առանց նկատի առնելու արտադրական պլանը և արտադրական առաջադրանքների կատարումը.

գ) ՄՏԿ-ների 1936 թվականի տարեկան հաշվետվությունները հաստատելիս յերևան բերել յուրաքանչյուր ՄՏԿ-ի իրական ֆինանսական վիճակը, մանրամասնորեն ստուգել ինվենտարիզացիան, հատուկ ուշադրություն նվիրելով տրակտորների, կոմբայնների և այլ գյուղատնտեսական մեքենաների տեխնիկական վիճակին, ստուգելով նրանց պիտանիությունը և մի ամսում՝ ՄՏԿ-ների դիրեկտորների ու շրջանային կուսակցական և խորհրդային կազմակերպությունների հետ միասին կոնկրետ ձեռնարկումներ մշակել ՄՏԿ-ների ֆինանսական-տնտեսական վիճակն առողջացնելու, ինչպես և ՄՏԿ-ների շենքերը բարեկարգելու ու աշխատողների կուլտուրական-կենցաղային պայմանները բարելավելու համար.

դ) ամենաուշը մինչև սույն թվի հունվարի 30-ը յուրաքանչյուր ՄՏԿ-ին հասցնել գարնանացանի, ագրոտեխնիկական ձեռնարկումների, բերքատվության, տրակտորների, ավտոմեքենաների, գյուղատնտեսական մեքենաների ու հանքային պարարտանյութերի ստացման, դրամագլուխների ներդրման (առանձնացնելով շինարարության յուրաքանչյուր տեսակը) 1937 թվականի պլանային առաջադրանքները, ինչպես և տրակտորային աշխատանքների պլանը, վառելանյութի ծախսման նորմաները և ֆինանսավորման պլանը.

ե) պարտավորեցնել ՄՏԿ-ների դիրեկտորներին՝ մինչև սույն թ. փետրվարի 15-ն ավարտել ՄՏԿ-ների արտադրական-ֆինանսական պլանները կազմելու գործը.

զ) ՄՏԿ-ների արտադրական-ֆինանսական պլանների հաստատումն ավարտել ամենաուշը մինչև սույն թվի մարտի 1-ը.

է) սահմանել տրակտորային արտադրանքի և վառելանյութի ծախսման դիֆերենցիալ նորմաներ, ըստ առանձին կոլտնտեսությունների, պարտավորեցնելով ՄՏԿ-ների դիրեկտորներին՝ շերտավորել վառելանյութերի ծախսման նորմաներն ըստ առանձին բրիգադների.

ը) բաշխել ըստ ՄՏԿ-ների նոր ստացվող տրակտորները, կոմբայնները և գյուղատնտեսական այլ մեքենաները, այն հաշվով, որ ապահովվի արտադրական ծրագրի կատարումը գարնան ու աշնան աշխատանքների յեռուն շրջանում և վերացվի բուքսիրային աշխատանքի պրակտիկան, որ առաջ է բերում ավելորդ ծախսեր, մեքենաների մաշում ժամանակից առաջ և ավելացնում է նորոգումների քանակը։

3. Առաջարկել Պետբանկի և Գյուղատնտեսական բանկի Հայաստանի գրասենյակներին՝ ուժեղացնել իրենց վերահսկողությունը ՄՏԿ-ների ֆինանսավորման վրա և թույլ չտալ ավելի միջոցների հանձնումը, ինչպես և դրանց օգտագործումը վոչ ըստ նպատակի։

4. Առաջարկել ՄՏԿ-ների դիրեկտորներին՝ անձամբ զբաղվել ՄՏԿ-ների ֆինանսական տնտեսությամբ, պահպանել ֆինանսական կարգապահությունը, վերացնել միջոցները վոչ արդյունավետ ծախսելու պրակտիկան և միաժամանակ թույլ չտալ, վոր իրենց միջոցները յերկար ժամանակ մնան զանազան պարտապանների մոտ։

ՄՏԿ-ների գլխավոր հաշվապահների համար ստեղծել բոլոր պայմանները, ամեն կերպ ոգնելով նրանց ֆինանսական հաշվետվությունը կանոնավորելու գործում։

5. Առաջարկել Հողժողկոմատին, կուսակցության շրջկոմներին և ՄՏ կայանների դիրեկտորներին՝ վերացնել ամբողջ տարվա ընթացքում կատարվող վերանորոգումն անտեսելու վնասակար պրակտիկան և կազմակերպել տրակտորների պլանային-նախազգուշական վերանորոգումը ժամանակին, յուրաքանչյուր տրակտոր ապահովելով անհրաժեշտ պահեստի մասերով, իսկ յուրաքանչյուր տրակտորային բրիգադը՝ կոմպլեքտային գործիքներով։ Դաշտային աշխատանքների ժամանակ կազմակերպել շարժական դաշտային վագոններ՝ տրակտորային բրիգադներին սպասարկելու համար, և ապահովել վերանորոգման աշխատանքների ճիշտ նորմավորումը։

Տրակտորների կարողությունն առավելագույն չափով օգտագործելու նպատակով, հատուկ ուշադրություն նվիրել ջրի կոռբյուրատորների օգտագործմանը, տրակտորների ճիշտ կարգավորմանը, կցորդ ինվենտարով ագրեգատացնելուն, ուժեղացնելով տրակտորային բրիգադներին ցույց տրվող տեխնիկական ոգնությունը։

6. Առաջարկել Հողժողկոմատին.

ա) մեկ ամսվա ընթացքում կատարել յուրաքանչյուր վերանորոգման արհեստանոցի շինարարության ու կահավորման վիճակի մանրազնին հետազոտություն, լրացնելով արհեստանոցների կահավորումը և ապահովելով դազգյահային սարքավորման լրիվ բեռնավորումը.

բ) 20 որվա ընթացքում մշակել և Ժողկոմխորհին ներկայացնել Յերևանում «Լեպսե» արտելի արհեստանոցների բազայի վրա մոտոռների վերանորոգման գործարան կազմակերպելու հարցը։

Հայաստանի Կ(բ)Կ Կենտկոմի Բյուրոն մատնանշում է, վոր յուրաքանչյուր ՄՏԿ-ի դիրեկտորի պատվի գործը պետք է լինի տրակտորներին որինակելի ու հոգատար խնամք տանել, արտադրական լրիվ կարողությամբ ոգտագործել։

7. Կենտկոմն առանձնապես նշում է 1937 թվականի գարնանային աշխատանքների համար անհրաժեշտ տրակտորների, գյուղատնտեսական մեքենաների ու ավտոմեքենաների վերանորոգման անբավարար ընթացքը։ Մինչև հունվարի 15-ը վերանորոգված է յեղել ընդամենը 267 տրակտոր, վորը կազմում է պլանի 41,1 տոկոսը։ Առանձնապես հետ են մնում Հոկտեմբերյանի ՄՏկայանը (15,5 տոկոս, դիրեկտորն է ընկեր Սուքիասյանը)։ Արարատի ՄՏկայանը (28,6 տոկոս —ընկեր Հովհաննիսյան), Բասարգեչարի ՄՏկայանը (25 տոկոս), Սիսիանի ՄՏկայանը (56 տոկոս—ընկեր Պողոսյան), Վաղարշապատի ՄՏկայանը (17 տոկոս—Հակոբջանյան)։



Ժամանակին վերանորոգմանը չպատրաստվելու և հիմնական վերանորոգման համար բաց թողնված միջոցներն այլ նպատակների համար ոգտագործելու հետևանքով մի շարք ՄՏկայաններում (Բասարգեչարի, Ն. Ախտայի, Ն. Բայազետի) վերանորոգման աշխատանքները ծավալվել են միայն հունվարի սկզբներին։

Կենտկոմի բյուրոն պարտավորեցնում է Հողժողկոմատին, կուսակցության շրջկոմներին և ՄՏկայանների դիրեկտորներին՝ ընդհուպ զբաղվել տրակտորների ու գյուղատնտեսական մեքենաների վերանորոգմամբ, սահմանելով աշխատանքների հնգորյա հաստատուն առաջադրանքներ և հատուկ ուշադրություն նվիրելով վերանորոգման վորակին։

Սահմանել այնպիսի կարգ, վոր վերանորոգված յուրաքանչյուր տրակտոր ընդունեն անձամբ ՄՏկայանի դիրեկտորը, ՄՏկայանի մեխանիկը և Հողժողկոմատի ներկայացուցիչը։ Այդ աշխատանքն ավարտել վոչ ուշ փետրվարի 25-ից։ Մինչև փետրվարի 28-ը ՄՏկայանի դիրեկտորը Հողժողկոմատի պատասխանատու ներկայացուցչի հետ միասին յուրաքանչյուր առանձին տրակտորի համար պիտի հաստատի 1937 թվականի աշխատանքի պլանը, վորոշելով ՄՏկայանի յուրաքանչյուր տրակտորի մարշրուտը։ Այդ պլանը պիտի հասցվի մինչև յուրաքանչյուր տրակտորը և տարվա ընթացքում այդ պլանը փոփոխել կարող է միայն ՄՏկայանի դիրեկտորը, բացառիկ դեպքերում։

Հանձնարարել Ժողկոմխորհին՝ լսել «ԳՈՒՏԱՊ»-ի Հայաստանի բաժանմունքի զեկուցումը՝ ՄՏկայաններին տրակտորի ու ավտոմեքենաների պահեստի մասեր մատակարարելու ընթացքի մասին և վճռական միջոցներ ձեռք առնել ՄՏկայանները պակասող պահեստի մասերով ապահովելու ուղղությամբ։

8. Առաջարկել Հողժողկոմատին՝ գարնանացանի կամպանիայի համար բոլոր ՄՏկայաններն ապահովել նավթի տարայով, տակառներով, ցիստերններով և գործի գցող ինվենտարով, այնպիսի քանակությամբ, վոր գարնանացանի աշխատանքների ընթացքում ապահովվի տրակտորային բրիգադներին անընդմեջ վառելիք և յուղանյութեր մատակարարելը։

9. Նշելով վառելիքի փոխադրման անբավարար ընթացքը հունվար ամսին՝ առաջարկել Հողժողկոմատին, Հայկոոպին, ՄՏկայանների դիրեկտորներին, կուսակցության շրջկոմներին ու շրջգործկոմներին՝ վճռական միջոցներ ձեռք առնել բաց թողնված վառելիքի բոլոր տեսակները ժամանակին փոխադրելու համար։

10. Առաջարկել Հողժողկոմատին.

ա) տասն որվա ընթացքում պարզել նավթի տարայի լրիվ պահանջը և ԽՍՀՄ-ի Հողժողկոմատի առջև հարց հարուցել լրացուցիչ քանակությամբ տակառներ ու ռեզերվուարներ ստանալու համար.

բ) միաժամանակ մինչև 1937 թվականի մարտի 1-ը Յերևանի ու Լենինականի գործարաններին պատվիրել պատրաստելու 1000 տոնն վառելիքի տարա.

գ) հաստատ կարգ մտցնել ՄՏկայանների վառելիքային տնտեսության մեջ, վերացնելով այն պրակտիկան, յերբ ՄՏկայանի նավթի բազայի վարիչը ՄՏկայանի նավթի բազայի որինակելի վիճակի համար պատասխանատու չի հանդիսանում ՄՏկայանի դիրեկտորի առջև։

Հանձնարարել կուսակցության շրջկոմներին՝ ստուգել նավթի բազաների աշխատողների կազմը և ամրացնել ամուր, ստուգված, իրենց գործն իմացող՝ աշխատողներով։

Հանձնարարել ընկերներ Դաստակյանին, Գյոդակյանին, Կարախանյանին, Գումեդինին և Հայկոոպի վարչությանը՝ մշակել Ցելենովկայում մերձակա շրջանների ՄՏ-կայաններին վառելիք մատակարարելու համար նավթի բազա կազմակերպելու հարցը և ներկայացնել Ժողկոմխորհին։

Պարտավորեցնել Հողժողկոմատին և ՄՏկայանների դիրեկտորներին՝ 1937 թվականին ավարտել անցյալ տարվանից մնացած բոլոր կիսավարտ օբյեկտների շինարարությունը։ Բոլոր շինարարություններն ապահովել ստուգված նախագծերով ու նախահաշիվներով, նկատի ունենալով շինարարության առավելագույն էժանացումը և ժամանակին ներմուծել ֆոնդային շինանյութերը, ձմեռային շրջանը լայնորեն օգտագործելով տեղական շինանյութերի հայթայթման ու փոխադրման համար։

Հողժողկոմատում կազմակերպել հատուկ շինարարական բաժին, նրա վրա դնելով ՄՏկայանների ու մեքենա-տրակտորային արհեստանոցների շինարարության պլանավորման, նախագծման ու վերահսկողության պարտականությունը։

12. Պարտավորեցնել ՄՏկայանների դիրեկտորներին՝ անմիջապես ձեռնամուխ լինել ՄՏկայանների բակերի սալահատակմանը, ՄՏկայանների շենքերի վերանորոգմանը, սպիտակեցմանը, ներկելուն, մայթեր պատրաստելուն և կազմակերպել ՄՏկայանների ավանների մասսայական կանաչապատում, մասնավորապես պտղատու այգիներ տնկելու միջոցով։

Կենտկոմը ՄՏկայանների դիրեկտորների աշխատանքը կգնահատի նաև այն բանով, թե նրանք ինչպես հոգ կտանեն ՄՏկայանների տնտեսության բարեկարգմանը։

13. Պարտավորեցնել Հողժողկոմատին՝ 20 օրվա ընթացքում ՄՏկայանները մշտական աշխատանքի ուղարկել 10 հաշվապահ և 1937 թվականի ընթացքում բոլոր ՄՏկայաններն ու մեքենա-տրակտորային արհեստանոցները կոմպլեկտավորել ինժեներ մեխանիզատորներով։

14. Պարտավորեցնել Հողժողկոմատին, կուսակցության շրջկոմներին, ՄՏկայանների դիրեկտորներին՝ կազմակերպել բրիգադիրների ագրոտեխնիկական ուսուցում այն հաշվով, վոր 1937 թվականին յուրաքանչյուր բրիգադիր տիրապետի ագրոտեխնիկային։

15. Առաջարկել ՀԿ(բ)Կ Կենտկոմի Գյուղատնտեսական բաժնին և Հողժողկոմատին՝ մեկ ամսվա ընթացքում ստուգել տրակտորային բրիգադիրների, կոմբայնավարների ու գյուղատնտեսության մեխանիզատորների դպրոցների վիճակը և միջոցներ ձեռք առնել բարելավելու նրանց աշխատանքը։ Լայնորեն կիրառել յերիտասարդ մասնագետներին (ինժեներ-մեխանիզատորներին, ագրոնոմներին) ստաժ ձեռք բերելու համար ՄՏկայաններն ուղարկելու պրակտիկան, նրանց առաջ քաշելով բրիգադիրի պաշտոնում։

Առաջարկել Հողժողկոմատին՝ բոլոր տրակտորային բրիգադներն ապահովել բրիգադիրների աշխատանքի և տրակտորային բրիգադի աշխատանքի սկզբնական հաշվառման գրվածքի վերաբերյալ հրահանգներով.

16. Պարտավորեցնել ՄՏկայանների դիրեկտորներին.

ա) միջոցներ ձեռք առնել ՄՏկայանների կողմից կոլտնտեսություններին ցույց տրվող ղեկավարությունն ուժեղացնելու ուղղությամբ՝ կոլտնտեսային բրիգադների աշխատանքների գրվածքը մանրամասն ուսում-



նասիրելու ու կոլտնտեսությունների ղեկավարներին օգնելու և յուրաքանչյուր կոլտնտեսային բրիգադում աշխատանքը, հաշվառումն ու հաշվետվությունը ճիշտ կազմակերպելու միջոցով.

բ) ըստ առանձին կոլտնտեսությունների կազմել 1937 թվականին կիրառվելիք ագրոտեխնիկական և այլ ձեռնարկումների պլանը, հատուկ ուշադրություն նվիրելով այն կոլտնտեսություններին, վորոնք 1936 թվականն ավարտել են արտադրական վատ ցուցանիշներով։

17. Առաջարկել Հողժողկոմատին և ՄՏկայանների դիրեկտորներին՝ մեկ ամսվա ընթացքում լուծարքի յենթարկել ՄՏկայանների ունեցած դեբիտորային պարտքերը։

18. Կենտկոմը մատնանշում է Հողժողկոմատին, վոր մի շարք ՄՏկայանների (Գորիսի, Սիսիանի, Ախտայի, Ն. Բայազետի, Ամասիայի) ֆինանսական վատ վիճակի պատճառը տնտհաշվարկի լիակատար անտեսումն է — ինչպես ՄՏկայանների դիրեկտորների, այնպես և Հողժողկոմատի կողմից։

Տնտհաշվարկը պետք է դառնա ՄՏԿ-ների ֆինանսական առողջացման կարևորագույն լծակը։

Առաջարկել Հողժողկոմատին միջոցներ մշակել և արդեն 1937 թվականին լիակատար տնտհաշվարկ կիրառել Լենինականի ու Հոկտեմբերյանի ՄՏկայանների բոլոր բրիգադներում ու ցեխերում։

19. Առաջարկել Հողժողկոմատին (ընկեր Գումեդինին)՝ այնպես կազմակերպել աշխատանքը, վոր Հողժողկոմատի արտադրական վարչություններում (Հացահատիկային, Բամբակագործական) ապահովվի յուրաքանչյուր առանձին ՄՏկայանի մեքենատրակտորային ու ֆինանսական տնտեսության օպերատիվ ղեկավարությունը։

20. Առաջարկել կուսակցության շրջկոմներին և ՄՏկայանի դիրեկտորների՝ քաղաքական գծով՝ տեղակալներին.

ա) Վրաստանի Կ(բ)Կ Կենտկոմի 5-րդ պլենումում ընկեր Բերիայի տված ցուցումների և Հայաստանի Կ(բ)Կ Կենտկոմի 7-րդ պլենումի վորոշումների հիման վրա վերացնել ՄՏկայանների կուսկազմակերպությունների աշխատանքում յեղած թերությունները և սիստեմատիկաբար քաղաքական ու մասսայական աշխատանք կատարել ՄՏկայանների աշխատողների մեջ։ ՄՏկայանների սկզբնական կուսկազմակերպություններն իրենց քաղաքական ու մասսայական աշխատանքով պետք է օժանդակեն կուսակցության թշնամիների և հակակոլտնտեսային ու հակապետական տրամադրությունների դեմ մղվող պայքարում կուսկազմակերպության ու յուրաքանչյուր կոմունիստի զգաստությունն ամեն կերպ բարձրացնելուն և ապահովեն ՄՏկայանի աշխատանքի լավագույն կազմակերպումը.

բ) ՄՏկայանների սկզբնական կուսկազմակերպության աշխատանքի կենտրոնում դնել ստախանովյան շարժման կազմակերպումն ու ծավալումը տրակտորային բրիգադներում, արհեստանոցներում և այլն, գլխավորել ստախանովականների պայքարը թափթփվածության դեմ, տնտեսական ու տեխնիկական ղեկավարության թերությունների դեմ, վորոնք խանգարում են ստախանովականների աճմանը՝ ՄՏկայանի յեկամտաբերության համար նրանց մղած պայքարում.

գ) անհրաժեշտ կուլտուր-կենցաղային պայմաններ ստեղծել ՄՏկայանների բանվորների համար, բոլոր բրիգադներն ապահովել վրաններով,

դաշտային վագոններով, կահավորել գլանք, կազմակերպել բանվորների հանգիստը և սիստեմատիկաբար նրանց մատակարարել թարմ գրականություն ու թերթեր.

դ) ապահովել կուսակցական վերահսկողությունը կոլտնտեսությունների՝ պետության հանդեպ ունեցած բոլոր պարտավորությունները կատարելու, կոլտնտեսությունների ու ՄՏկայանի միջև կնքված պայմանագրերի ճիշտ կատարման, ինչպես նաև կոլտնտեսությունների կազմակերպչական-տնտեսական ամրացման ուղղությամբ կուսակցության ու կառավարության նշած բոլոր ձեռնարկումների կենսագործման նկատմամբ։

Հայաստանի Կ(բ)Կ Կենտկոմը հավատացած է, որ հողային մարմինները, ՄՏկայանների դիրեկտորները, կուսակցության շրջկոմները, շրջգործկոմները, ՄՏկայանների կոմունիստները, կոմյերիտականներն ու ստախանովականները, կոլտնտեսականներն ու ՄՏկայաններում աշխատող մասնագետները մարտականորեն ձեռնամուխ կլինեն ՄՏկայանների տնտեսական գործունեությունը բարելավելու կարևորագույն խնդիրների կատարմանը և արդեն մինչև գարնանացանի աշխատանքներն սկսելը Հայաստանի ՄՏկայանները կդարձնեն իսկապես օրինակելի, կուլտուրականորեն կազմակերպված գյուղատնտեսական ձեռնարկություններ։



# ՀԽՍՀ-ՈՒՄ ՄՐԳԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԽԱՂՈՂԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԶԱՐԳԱՑՆԵԼՈՒ 1936 Թ. ԱՇՆԱՆ ՅԵՎ 1937 Թ. ՊԼԱՆԻ ՄԱՍԻՆ

## ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԺՈՂԿՈՄԽՈՐՀԻ ՅԵՎ ՀԿ(Բ)Կ ԿԵՆՏԿՈՄԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

1. Սահմանել խաղողի ու մրգատու այգիների և մերձարևադարձային մշակույթների պլանտացիաներ տնկելու 1936 թ. աշնան և 1937 թվականի պլանը հետևյալ չափով. խաղողի այգի՝ 2270 հեկտար, մրգատու այգի՝ 2524 հեկտար, հատապտուղ՝ 113 հեկտար և չոր մերձարևադարձային մշակույթներ՝ 72 հազար հատ, հետևյալ կերպ բաշխելով ըստ հատվածների, տարիների ու շրջանների (տես №№ 1, 2, 3, 4 աղյուսակները)։

2. Հաստատել 1936 թ. աշնանից մինչև 1937 թվականը ներառյալ տնկարաններ հիմնելու պլանը հետևյալ չափով. խաղողի՝ 147,5 հեկտար, մրգեղենի՝ 289,8 հեկտար և չոր մերձարևադարձային մշակույթների՝ 22,5 հեկտար, հետևյալ կերպ բաշխելով ըստ հատվածների, տարիների ու շրջանների (տես №№ 4, 5 և 6 աղյուսակները)։

3. 1937 թվականի աշնանը տնկվելիք 1031 հեկտար և 1938 թվականի գարնանը տնկվելիք 720 հեկտար խաղողի այգիները տնկիներով ապահովելու համար, 1937 թվականի գարնանը պատրաստել 7.705.000 խաղողի մատ, որոնցից մուսկատ՝ 280.000, սեմիլիոն՝ 70.000, սերսիալ՝ 15.000, տոկայ՝ 5000, վերդելիո՝ 5000, պինո՝ 10.000, սեղանի խաղողներից՝ յեզանդարի՝ 24 հազար, խալիլի՝ 22 հազար, հաչաբաշ՝ 380 հազար, իծապտուկ՝ 52 հազար, քիշմիշի՝ 148 հազար և այլ տեսակներ (տես աղյուսակ № 7)։

4. Ֆիլոքսերով վարակված շրջաններում խաղողի այգիներ գցելու պլանի կատարումն ապահովելու համար (1937 թ. աշնանը 21 հեկտար և 1938 թ. գարնանը՝ 30 հեկտար), 1937 թ. գարնանը պատվաստ կատարելու պլանը որոշել 400 հազար հատ, հետևյալ տեսակներից՝ ռկածիթելի, սապերավի, լկենի, ալիգոտե։

5. 1937 թ. գարնանը կոլտնտեսային մրգատու ծառերի տնկարաններում պատվաստ կատարելու (կոպուլիրովկա) պլանը սահմանել 60 հազար հատ, հետևյալ կերպ բաշխելով ըստ շրջանների, ցեղերի ու տեսակների (տես աղյուսակ № 8)։

6. 1937 թ. գարնանն այգի գցելու համար 1936 թ. աշնանը հողը պատրաստելու պլանը սահմանել հետևյալ չափով. խաղողի այգիների համար՝ 437 հեկտար, մրգատու այգիների համար՝ 551 հեկտար, մրգատու տընկարանների համար՝ 36 հեկտար, խաղողի տնկարանների համար՝ 91 հեկտար, հետևյալ կերպ բաշխելով ըստ շրջանների (տես աղյուսակ № 9)։

Հանձնարարել Հողժողկոմատին, շրջկոմներին և շրջգործկոմներին՝ ամենաուշը մինչև 1936 թ. դեկտեմբերի 1-ն ավարտել հողամասերի հատկացումը՝ 1937 թ. գարնանը խաղողի, մրգի, հատապտուղների, չոր արևադարձային մշակույթների այգիներ գցելու և տնկարաններ հիմնելու համար, ձևակերպելով այն համապատասխան ակտերով։ Իսկ 1937 թվականի

աշնանն այգիներ գցելու համար սահմանված պլանի համաձայն, հողամասեր հատկացնել մինչև 1937 թվականի մայիսի 1-ը։

7. Նկատի առնելով, որ սոցիալիստական մրգաբուծության ու խաղողաբուծության հաջող զարգացման կարևորագույն պայմանն է մրգեղենի ու խաղողի մշակույթների ցեղական ու սորտային ճիշտ մանրաշրջանացումը, արտադրության մեջ ամենաբերքատու, բարձրորակ ու դիմացկուն սորտեր մտցնելը և նրանց տերիտորիալ ճիշտ բաշխումը առանձին շրջանների պայմանների համաձայն, առաջարկել Հողժողկոմատին.

ա) 1937 թվականին մշակել Հայաստանի մրգեղենի ու խաղողի մասիֆների մանրաշրջանացումը, նպատակ դնելով էլ ավելի և կանոնավոր զարգացնել մրգեղենի ու խաղողի մշակույթներն առանձին շրջաններում.

բ) այսուհետև մրգի և խաղողի այգիների տնկումը կատարել բացառապես առանձին շրջանների միկրոկլիմայական պայմաններին վերաբերող նյութերի հիման վրա։

8. Խաղողի ու մրգեղենի ըստ տեսակների մանրաշրջանացում կատարելու և աստիճանաբար զտատեսակ ու ստանդարտային տունկերին անցնելու ձեռնարկումներն իրականացնելու համար առաջարկել Հողժողկոմատին՝ 1937 թվականին բոլոր շրջաններում իրականացնել մրգատու ծառերի ու խաղողի թփերի պասպորտացումը, սորտային ու հասակային տեսակետից, և պասպորտացման տվյալների հիման վրա մշակել ու ներկայացնել Ժողկոմխորհին հին այգիները վերակառուցելու ձեռնարկումներ։

9. 1937 թվականին խաղողի հին այգիներն անդալիսներով կամ արմատակալած մատներ տնկելով լրացնելու համար, սահմանել 656 հեկտարի պլան, հետևյալ կերպ բաշխելով ըստ շրջանների, խորհտնտեսությունների ու կոլտնտեսությունների.

| ՇՐՋԱՆՆԵՐ | Ընդամենը | Կոլտնտես. | Խորհտնտես. |
|---|---|---|---|
| Վաղարշապատի շրջանում | 210 | 120 | 90 |
| Ղամարլվի շրջանում | 150 | 150 | — |
| Աշտարակի շրջանում | 70 | 70 | — |
| Վեդու շրջանում | 89 | 50 | 39 |
| Երևանի շրջանում | 38 | 30 | 8 |
| Հոկտեմբերյանի շրջանում | 99 | 80 | 19 |
| Ընդամենը՝ | 656 | 500 | 156 |

10. Խաղողի ու մրգի այգիների տնկումը սահմանված ստանդարտային սորտի տնկիներով ապահովելու նպատակով, առաջարկել Հողժողկոմատին.

ա) 1937 թ. ընթացքում ստուգել խաղողի ու մրգի այգիները, հաշվի առնել գոյություն ունեցող բոլոր զտատեսակ տունկերը և օգտագործել դրանք վորպես մանրանյութ.

բ) 1937 թ. գարնանից ձեռնարկել լավագույն զտատեսակ ստանդարտային սորտերի մրգատու մայր տնկարանների կազմակերպումը հինգ



շրջաններում (Երևան, Բայազետ, Լենինական, Կիրովական, Գորիս) և խաղողի մայր տնկարանների կազմակերպումը 4 շրջաններում (Հոկտեմբերյան, Ղամարլու, Երևան, Ալլահվերդի).

գ) հատուկ հաշվառման յենթարկել և վերահսկողության տակ առնել հանրապետության մեջ գոյություն ունեցող բոլոր մայր տնկարանները, ապահովելով այդ մայր տնկարանների համապատասխան ղեկավարումը։

11. Նշելով մեր անթույլատրելի չափով հետ մնալը տնկանյութի սեփական բազա (տնկարանային տնտեսություն) ստեղծելու գործում, առաջարկել Հողժողկոմատին և համապատասխան շրջանների շրջկոմներին ու շրջգործկոմներին.

ա) ապահովել յուրաքանչյուր շրջանի մեկ կամ յերկու խոշոր կոլտնտեսության մեջ մրգատու տնկարանների ստեղծումը 1936 թվականի աշնանից.

բ) 4 շրջաններում (Լենինական, Բայազետ, Գորիս, Ապարան) կազմակերպել մրգատուների միջշրջանային պետական տնկարաններ, նախատեսելով այդ ձեռնարկումը 1937 թվականի պլանում.

գ) տնկարաններում աչքապատվաստ անշեղորեն կատարել տվյալ շրջանի (գոտու) համար սահմանված ստանդարտային սորտով, սահմանելով 1937 թ. պատվաստման չափն առնվազն 1,300 հազար հատ, վորոնցից դեղձենի՝ 230 հազար հատ, ծիրանի ծառ՝ 500 հազար հատ, սալորենի՝ 100 հազար հատ, խնձորենի՝ 300 հազար հատ, տանձենի՝ 160 հազար հատ, բալենի և կեռասենի՝ 10 հազար հատ։

12. Նշելով «Արարատ» տրեստի և «Հայկոնսերվտրեստի» մրգա-խաղողային խորհտնտեսությունների կատարած առաջատար դերը կոլտնտեսություններին ու կոլտնտեսականներին զտատեսակ տնկանյութ մատակարարելու ասպարեզում, հանձնարարել Հողժողկոմատին, «Արարատ» տրեստին և «Կոնսերվտրեստին»՝ ձեռնարկումներ մշակել խորհտնտեսությունները կոլտնտեսություններին մեծարժեք տնկանյութ մատակարարող օրինակելի տնկարաններ դարձնելու համար և իրենց առաջարկները մի ամսում ներկայացնել Ժողկոմխորհին։

13. Առաջարկել Հողժողկոմատին և Ալլահվերդու շրջգործկոմին՝ ապահովել 1937 թվականին Լճկաձոր գյուղում ջերմոցների կառուցումը, վորոնք պետք է տան 500 հազար պատվաստանյութ՝ ամերիկյան մատները պատվաստելու համար։

14. Նշելով, վոր հողային օրգանները վոչ մի աշխատանք չեն կատարում հատապտղի մշակությունը զարգացնելու ուղղությամբ (յելակ, մոր, հաղարջ, կոկռոշ), առաջարկել Հողժողկոմատին՝ իր հատուկ հսկողության տակ վերցնել և ամեն կերպ օժանդակություն և օգնություն ցույց տալ տեղերին (ագրոտեխնիկ. ձեռնարկումներ և այլն) հատապտղի թփեր տնկելու պլանն անպայման կատարելու գործում։

15. Մրգի ու խաղողի այգիների բերքատվությունը բարձրացնելու նպատակով, պարտավորեցնել Հողժողկոմատին, շրջկոմներին և շրջգործկոմներին՝ իրագործել հետևյալ ագրոտեխնիկ ձեռնարկումները.

ա) յերկու ամսում մշակել ըստ առանձին գոտիների չերտավորված ագրոտեխնիկ. ձեռնարկումներ՝ խաղողաբուծության, մրգաբուծության, մեր-

ձարևադարձային մշակույթների տնկարանների և հատապտուղների այգիների համար.

*բ)* ապահովել 1937 թվականի 1919 հեկտար այգիների և 710 հեկտար մրգատու այգիների պարարտացումը հանքային պարարտանյութերով, մշակելով մինչև 1937 թ. հունվար ամիսը Քիմիացման Ինստիտուտի և Մրգաբանջարանոցային ու խաղողագործական-գինեգործական Զոնալ Կայանի միջոցով պարարտացման մեթոդիկան, նորմաներն ու ժամկետները.

*գ)* ապահովել 500 հեկտար՝ խաղողի այգիների վերածումը շպալերային ձևի։ Դրանցից 15 հեկտար՝ Աշտարակի շրջանում, 72 հեկտար՝ Վեդու շրջանում, 125 հեկտար՝ Ղամարլուի, 36 հեկտար՝ Վաղարշապատի և 252 հեկտար՝ Հոկտեմբերյանի շրջանում։ Մյուս բոլոր խաղողի այգիներն ապահովել նեցուկներով.

*դ)* 1937 թվականին կատարել խաղողի այգիների համատարած սրսկում՝ միլդիուի, օիդիումի ու լիստովյորտկայի դեմ և մրգատու այգիների լիակատար կոմպլեքսային բուժումն ու պայքարը վնասատուների և հիվանդությունների դեմ։

Մինչև 1937 թ. մարտի 1-ը մշակել ըստ առանձին ցեղերի ու շրջանների շերտավորված ձեռնարկումներ՝ մրգի ու խաղողի այգիները բուժելու համար.

*ե)* սահմանել մրգի և խաղողի այգիների բուժման համար թույներ ու ապարատուրա բերել տալու պլանը հետևյալ չափով. ծծումբ—200 տոնն, յերկաթարջասպ—80 տոնն, պղնձարջասպ—200 տոնն, կալցիումի արսենատ—20 տոնն, նիկոտին սուլֆիտ 6 տոնն, ավտոմաքս—1200 հատ, վերմորել—800 հատ, ձիաքարշ-մոտորային սրսկիչ—10 հատ («Պիոներ»)։

Առաջարկել Հողժողկոմատին՝ ապահովել թույների և ապարատների ժամանակին ստացվելը.

*զ)* ապահովել խաղողի ու մրգի հին այգիների առնվազն 5 անգամ փոռոգումը, ներառյալ նաև ձմռվա մի անգամ փոռոգումը.

*է)* այգեթաղն ավարտել ամենաուշն այս տարի նոյեմբերի 15-ին։

16. Մրգի ու խաղողի այգիների համար սահմանել հետևյալ միջին բերքը, հետևյալ ապրանքային շրջանների համար (մրգատու այգիների համար կիլոգրամով՝ յուրաքանչյուր ծառից, խաղողի այգիների համար՝ ցենտներով մի հեկտարից).

| ՇՐՋԱՆՆԵՐ | Դեղձ | Ծիրան | Խնձոր | Տանձ | Սալոր | Խաղող |
|---|---|---|---|---|---|---|
| Ղամարլուի շրջան | 40 | 110 | — | 80 | 25 | 100 |
| Վաղարշապատի շրջան | 35 | 100 | — | 60 | 20 | 100 |
| Աշտարակի շրջան | 35 | 100 | — | 80 | 25 | 95 |
| Երևանի շրջան | 40 | 120 | 80 | 80 | 25 | 90 |
| Կոտայքի շրջան | — | 80 | 80 | 65 | 20 | — |
| Ալավերդու շրջան | 50 | — | 130 | 80 | 25 | — |
| Դիլիջանի շրջան | — | — | 110 | 90 | 25 | — |
| Կիրովականի շրջան | — | — | 110 | 90 | 25 | — |
| Միկոյանի շրջան | — | 80 | 80 | 80 | 25 | — |
| Մեղրու շրջան | 50 | 80 | 100 | 80 | 25 | 80 |
| Հոկտեմբերյանի շրջան | 35 | 100 | — | — | — | 85 |
| Վեդու շրջան | — | — | — | — | — | 85 |



17. Բացառիկ նշանակություն տալով մեքենայացման արմատացմանը խաղողի, մրգեղենի ու տնկարանային տնտեսության մեջ, պարտավորեցնել Հողժողկոմատին և Վաղարշապատի, Ղամարլուի, Վեդու, Հոկտեմբերյանի շրջանների շրջկոմներին ու շրջգործկոմներին՝ անհապաղ ձեռնարկել պլանտաժային գութանների ու ակոսափորերի ընթացիկ նորոգումը և պլանտաժի հողամասերի հատկացումը. ապահովել ՁՏԶ տրակտորների փոխադրումը աշխատանքի տեղերը և ավարտել հողի պատրաստումը մինչև նոյեմբերի 15-ը։

18. Խնդրել Միության Հողժողկոմատից՝ մինչև 1937 թ. գարունը առանձնացնել 50 հատ պլանտաժային գութան, 10 հատ կիլոֆեր-փխրեցնող գործիք և 90 կուլտիվատոր։

19. Նշելով այգեգործական մանր ինվենտարի նկատմամբ մրգի ու խաղողի այգիների ունեցած սուր կարիքը՝ պարտավորեցնել.

Հողժողկոմատին՝ մի ամսում ճշտել այգեգործական մանր ինվենտարի նկատմամբ շրջանների ունեցած պահանջը և ապահովել դրանց ստացումն ու հայտերի տեղավորումը Հայաստանի Տեղական Արդյունաբերության Ժողկոմատի ձեռնարկություններում։

Տեղական Արդյունաբերության Ժողկոմատին՝ ապահովել այգեգործական մանր ինվենտարի և բուժական ինվենտարի արտադրությունն այն հաշվով, վոր պահանջի 50 տոկոսն ապահովվի մինչև 1937 թ. ապրիլի 1-ը և 50 տոկոսը՝ մինչև 1937 թ. հուլիսի 1-ը։

20. Կոլտնտեսությունների ագրոսպասարկումը բարելավելու նպատակով, հանձնարարել Հողժողկոմատին և Ֆինժողկոմատին՝ 1937 թվականին բոլոր շրջանների հողբաժինների շտատում նախատեսել մասնագետ այգեգործի պաշտոնը։

21. Առաջարկել Հողժողկոմատին.

*ա)* 10-ն օրում վերանայել Հողժողկոմատի մրգա-խաղողաբուծական վարչության շտատն ու կառուցվածքը՝ Հողժողկոմատի ապարատն ու շրջանային հողային օրգաններն ամրացնելու և ուժեղացնելու ուղղությամբ, նպատակ դնելով ապահովել մրգաբուծության ու խաղողաբուծության զարգացման ղեկավարումը.

*բ)* հատուկ ուշադրություն նվիրել կադրերի նախապատրաստմանը և բրիգադավարների ու կոլտնտեսականների վորակի բարձրացմանը և 1936 թ. աշնան ընթացքում ու 1937 թվականին ապահովել հետևյալ թվով մասսայական վորակավորման կադրերի պատրաստումը՝ 1500 եռոդ, 700 աչքապատվաստ անող, 500 պատվաստող և 500 այգեգործ բրիգադավար.

*գ)* աննպատակահարմար համարելով Գյուղատնտեսական Ինստիտուտի այգեգործական ֆակուլտետի բաժանումը յերկու ցիկլի՝ պտղաբուծության և խաղողաբուծության, առաջարկել Հողժողկոմատին՝ Կենտկոմի Դպրոցական ու Գիտության բաժնի և Գյուղատնտեսական բաժնի հետ միասին, տասն օրում վերանայել ֆակուլտետի պլանն ու կառուցվածքը, վերածելով մրգաբուծության ու խաղողաբուծության ցիկլերը միասնական այգեգործական ֆակուլտետի։

Միաժամանակ վերանայել այգեգործական տեխնիկումների պլաններն

ու գասատուների կազմը, նպատակ դնելով բարելավել աշխատանքի դրվածքն ու ամրացնել կադրերը:

22. Նպատակահարմար համարել ապրանքային մրգատու ծառեր ունեցող կոլտնտեսություններում կազմակերպել մշտական բրիգադներ՝ այգեգործության հիմնական աշխատողների կազմից:

Պարտավորեցնել Հողժողկոմատին և շրջանային կազմակերպություններին՝ ապահովել մրգաբուծություն ու խաղողաբուծություն իմացող կոլտնտեսական բրիգադավարների ընտրությունն այդ բրիգադիրների համար և առնվազն 5 տարով այգետնկիներն ամրացնել բրիգադներին:

Վերանայել խաղողաբուծության ասպարեզում աշխատող կոլտնտեսականների աշխատանքի գնահատումներն այն հաշվով, որ նրանց աշխատավարձը պակաս չլինի այն կոլտնտեսականների աշխատավարձից, որոնք զբաղված են մյուս տեխնիկական մշակույթների ասպարեզում:

23. Ժողկոմխորհը և Կենտկոմն արձանագրում են, որ խաղողաբուծության ու մրգաբուծության ասպարեզում գիտահետազոտական կազմակերպությունների կատարած աշխատանքը հետ է մնում խաղողաբուծության ու մրգաբուծության արտադրանքի զարգացման ու որակի բարելավման գործնական խնդիրներից և առաջարկում են Մրգաբանջարանոցային ու խաղողաբուծական-գինեգործական Զոնալ կայաններին՝ արմատապես վերանայել իրենց աշխատանքը, նպատակ դնելով սերտ կապ հաստատել պրակտիկայի հետ, ընդհանրացնել առաջավոր տնտեսությունների ու ստախանովականների փորձը և աշխատանքի բարելավված մեթոդներ արմատացնել խորհտնտեսությունների ու կոլտնտեսությունների մրգա-խաղողաբուծական տնտեսությունների պրակտիկայում:

Առաջարկել Հողժողկոմատին՝ ուժեղացնել իր ամենօրյա սիստեմատիկ ղեկավարությունը գիտահետազոտական կայանների նկատմամբ, ինչպես և վերանայել նրանց 1937 թվականի թեմատիկ պլանները, խորացնելով սորտերի ստուգման ու բերքատվության բարձրացման ագրոտեխնիկայի և արտադրանքի որակի հարցերի մշակումը:

24. Պարտավորեցնել Հողժողկոմատին և Գյուղհրատին՝ 1937 թվականի ընթացքում հրատարակել հետևյալ մատչելի գրականությունը.

ա) մրգաբուծության ագրոկանոններ.

բ) խաղողաբուծության ագրոկանոններ.

գ) տնկարանային տնտեսության ագրոկանոններ.

դ) մերձարևադարձային բույսերի մշակման ագրոկանոններ.

ե) կոլտնտեսականների տնամերձ հողամասերում այգի գցելը.

զ) օրգանական և հանքային պարարտանյութերի գործադրումը մրգի ու խաղողի այգիներում.

է) այգի գցելը լեռնային շրջանների պայմաններում.

ը) պայքար՝ մրգի ու խաղողի այգիների վնասատուների և հիվանդությունների դեմ.

թ) աշխատանքի կազմակերպումն այգեգործության մեջ.

ժ) կիտրոնի տակառային մշակումը.

ժա) գինու խնամքը.

ժբ) մրգերի ու խաղողի ստանդարտային սորտիմենտը:



25. ՀԽՍՀ Ժողկոմխորհը և ՀԿ(բ)Կ Կենտկոմը, հատուկ նշանակություն տալով այգեգործության լայն արմատացմանն ու արագ զարգացմանը կոլտնտեսականների տնամերձ հողամասերում, առաջարկում են Հողժողկոմատին՝ միջոցներ ձեռք առնել, որ 1936 թ. աշնան և 1937 թվականի ընթացքում տնկարաններից, խորհտնտեսություններից ու կոլտնտեսություններից, կոլտնտեսականներին բաց թողնվի հետևյալ քանակությամբ տընկանյութ. ծիրանի ծառ՝ 74.800 հատ, դեղձենի՝ 42.600 հատ, սալորենի՝ 18 հազար հատ, խնձորենի՝ 15 հազար հատ, տանձենի՝ 15 հազար հատ:

Առաջարկել շրջկոմներին և շրջգործկոմներին՝ լրացուցիչ ռեսուրսներ գտնել կոլտնտեսականների կարիքներն առավելագույն չափով բավարարելու համար, այն հաշվով, որ յուրաքանչյուր կոլտնտեսականի տնամերձ հողամասում տնկվի առնվազն 35—40 մրգատու ծառ:

Միաժամանակ Հայաստանի ԽՍՀ Ժողկոմխորհը և ՀԿ(բ)Կ Կենտկոմն առաջարկում են Հողժողկոմատին, պրոֆմիութենական կազմակերպություններին, Յերևանի ու Լենինականի քաղխորհուրդներին և բոլոր շրջգործկոմներին՝ ամեն կերպ օժանդակություն և օգնություն ցույց տալ կոլտնտեսականներին, բանվորներին ու ծառայողներին, տներում տակառային մշակույթները (կիտրոն և ցիտրուսային այլ բույսեր) զարգացնելու գործում:

Հայաստանի ԽՍՀ-ի Ժողկոմխորհը և ՀԿ(բ)Կ Կենտկոմը, մատնանշելով խորհտնտեսություններում, կոլտնտեսություններում և կոլտնտեսականների տնամերձ հողամասերում խաղողաբուծության և մրգաբուծության զարգացման ունեցած տնտեսական մեծ նշանակությունը, պարտավորեցնում են կուսակցական, խորհրդային ու կոմյերիտական կազմակերպություններին և հողային օրգաններին՝ գլխավորել և բոլշևիկորեն կազմակերպել կոլտնտեսուհիների և կոլտնտեսականների պայքարը հանուն խաղողաբուծության ու մրգաբուծության զարգացման պլանների կատարման ու գերակատարման:

**Հայկական ԽՍՀ Ժողկոմխորհի նախագահի տեղակալ՝ Ա. ՏԱՀՍՈՒՎԱՐՅԱՆ**

**ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղար՝ ԱՄԱՏՈՒՆԻ**

Հավելված

## ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ

1. Մրգաբուծության յեվ խաղողաբուծության 1936 թ. աճման յեվ 1937 թ. պլանի մասին

2. 1937 թ. գարնանացանի պլանը, ըստ շրջանների

## ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ-ՈՒՄ 1936 Թ. ԱՇՆԱՆԻՑ ՄԻՆՉԵՎ 1937 Թ. ԱՇՈՒՆԸ ՆԵՐԱՌՅԱԼ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԽԱՂՈՂԻ ԱՅԳԻՆԵՐ ԳՑԵԼՈՒ ՊԼԱՆԸ, ԸՍՏ ՍՈՐՏԵՐԻ (ՀԵԿՏԱՐՆԵՐՈՎ)

Աղյուսակ № 1

| ՇՐՋԱՆՆԵՐ | Այգի գցելու տարիները | Նորատունկ այգիների տարածությունը | Այդ թվից: Խարջի | Մսխալի | Կախեթ | Գառան-դմակ | Հաչաբաշ | Քիշմիշ | Ալիդարա | Ցեղանդարի | Խալիլի | Ալախկի | Ճիլար | Իծապտուկ | Տեղական | Ռկածիթելի Սապերավի |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ալլահվերդու | 36 թ. աշնանը | 2 | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| | 37 » գարնանը | 6 | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | 1 | 5 |
| | 37 » աշնանը | 6 | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | 1 | 5 |
| Ախտայի | 36 » » | 3 | — | — | — | — | — | 1 | — | 1 | 1 | — | — | — | — | — |
| | 37 » գարնանը | 6 | — | — | — | — | — | 1 | — | 3 | 2 | — | — | — | — | — |
| | 37 » աշնանը | 4 | — | — | — | — | — | — | — | 2 | 2 | — | — | — | — | — |
| Աշտարակի | 36 » » | 5 | 5 | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| | 37 » գարնանը | 5 | 5 | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| | 37 » աշնանը | 5 | 3 | 1 | — | — | 1 | — | — | — | — | — | — | — | — | — |
| Գորիսի | 36 » » | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| | 37 » գարնանը | 5 | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | 5 | — |
| | 37 » աշնանը | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| Իջևանի | 36 » » | 1 | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | 1 |
| | 37 » գարնանը | 2 | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | 2 |
| | 37 » աշնանը | 6 | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | 2 | 4 |
| Միկոյանի | 36 » » | 10 | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | 10 | — |
| | 37 » գարնանը | 15 | — | — | 3 | — | 2 | 1 | — | 3 | 1 | — | — | — | 5 | — |
| | 37 » աշնանը | 15 | — | — | 3 | — | 2 | 1 | — | 3 | 1 | — | — | — | 5 | — |
| Կոտայքի | 36 » » | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| | 37 » գարնանը | 6 | 3 | 2 | — | — | 1 | — | — | — | — | — | — | — | — | — |
| | 37 » աշնանը | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| Մեղրու | 36 » » | 1 | — | — | — | — | — | — | 1 | — | — | — | — | — | — | — |
| | 37 » գարնանը | 5 | — | — | — | — | — | — | 3 | — | — | — | — | — | 2 | — |
| | 37 » աշնանը | 3 | — | — | — | — | — | — | 2 | — | — | — | — | — | 1 | — |
| Ազիզբեկովի | 36 » » | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| | 37 » գարնանը | 12 | — | — | 3 | — | 2 | 1 | — | 2 | 1 | — | — | — | 3 | — |
| | 37 » աշնանը | 8 | — | — | 2 | — | 1 | 1 | — | 1 | 1 | — | — | — | 2 | — |
| Շամշադինի | 36 » » | 1 | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | 1 |
| | 37 » գարնանը | 2 | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | 2 |
| | 37 » աշնանը | 5 | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | 5 |
| Վաղարշապատի | 36 » » | 59 | 49 | — | — | — | 5 | 5 | — | — | — | — | — | — | — | — |
| | 37 » գարնանը | 60 | 40 | 10 | — | — | 3 | 2 | — | — | — | — | 5 | — | — | — |
| | 37 » աշնանը | 90 | 40 | 10 | — | — | 10 | 4 | — | 2 | 2 | 3 | 17 | 2 | — | — |
| Վեդու | 36 » » | 11 | — | 7,5 | 3.5 | — | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| | 37 » գարնանը | 100 | 10 | 80 | — | — | 5 | — | — | 5 | — | — | — | — | — | — |
| | 37 » աշնանը | 120 | 20 | 64 | — | — | 5 | 20 | — | — | — | 2 | 5 | 2 | 2 | — |
| Ղամարլուի | 36 » » | 40 | — | 12 | 28 | — | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| | 37 » գարնանը | 130 | 20 | 40 | 65 | — | 5 | — | — | — | — | — | — | — | — | — |
| | 37 » աշնանը | 155 | 20 | 30 | 77 | — | 10 | 5 | — | 10 | 1 | — | — | 2 | — | — |
| Հոկտեմբերյ. | 36 » » | 120 | — | 30 | — | 80 | — | 10 | — | — | — | — | — | — | — | — |
| | 37 » գարնանը | 150 | 25 | 50 | — | 75 | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| | 37 » աշնանը | 226 | 30 | 65 | — | 80 | 20 | 10 | — | — | 6 | — | 10 | — | 5 | — |
| Երևան քաղ. | 36 » » | 15 | 10 | — | — | — | 1 | 1 | — | 2 | 1 | — | — | — | — | — |
| | 37 » գարնանը | 20 | 10 | 5 | — | — | — | — | — | — | — | — | 5 | — | — | — |
| | 37 » աշնանը | 50 | 15 | 5 | — | 3 | 15 | 5 | — | 3 | 2 | 1 | — | 1 | — | — |
| Թալինի | 37 » գարնանը | 5 | 2 | 2 | — | — | 1 | — | — | — | — | — | — | — | — | — |
| Ընդամենը կոլտնտեսություններում | | 1490 | 307 | 403,5 | 194,5 | 238 | 89 | 68 | 6 | 37 | 21 | 6 | 42 | 7 | 44 | 27 |

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ-ՈՒՄ 1936 Թ. ԱՇՆԱՆԻՑ ՄԻՆՉԵՎ 1937 Թ. ԱՇՈՒՆԸ ՆԵՐԱՌՅԱԼ «ԱՐԱՐԱՏ» ՏՐԵՍՏԻ ԽՈՐՀՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԽԱՂՈՂԻ ԱՅԳԻ ԳՑԵԼՈՒ ՊԼԱՆԸ՝ ԸՍՏ ՍՈՐՏԵՐԻ (ՀԵԿՏԱՐՆԵՐՈՎ)

Աղյուսակ № 2

| ՇՐՋԱՆՆԵՐ | Այգի գցելու տարիները | Տնկված ամբողջ տարածությունը | Ա յ գ ե ս տ ա ն ե ր: Խարջի | Մսխալի | Կախեթ | Գառանդմակ | Հաշտաշ | Քիշմիշ | Ալիկանտե | Ցեղատունջ | Խալիլի | Մուսկատ | Ռիսլինգ | Սեմիլյոն | Պինո | Տոկայ | Վերդելիո | Սապերավի | Ալիգոտե | Ճիլար | Ոսկեհատ | Կաբերնե |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Վաղարշապատի շրջանի № 4 խորհտնտեսություն | 1936 թ. աշնանը | 30 | 30 | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| | 1937 թ. գարնանը | 30 | 20 | 5 | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | 5 | — | — |
| | 1937 թ. աշնանը | 30 | — | — | — | — | — | — | — | — | — | 22 | 2 | — | 1 | 3 | 1 | 1 | — | — | — | — |
| Հոկտեմբերյան շրջանի № 6 խորհտնտեսություն | 1936 թ. աշնանը | 70 | — | 40 | 30 | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| | 1937 թ. գարնանը | 75 | — | 40 | 35 | 62 | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| | 1937 թ. աշնանը | 179 | 10 | 20 | — | | 10 | 10 | — | 3 | — | 40 | — | — | — | — | — | 2 | 7 | — | — | 15 |
| Վեդու շրջանի № 9 խորհտնտեսություն | 1936 թ. աշնանը | 30 | — | 20 | 10 | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| | 1937 թ. գարնանը | 50 | — | 30 | 20 | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| | 1937 թ. աշնանը | 116 | — | — | — | — | 8 | 2 | 10 | 3 | — | 55 | 5 | 10 | 3 | — | — | 5 | — | — | — | 15 |
| Ղամարլուի շրջանի № 5 խորհտնտեսություն | 1936 թ. աշնանը | 10 | — | — | — | — | 3 | 4 | — | 1 | 1 | — | — | — | — | — | — | — | — | — | 1 | — |
| | 1937 թ. գարնանը | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| | 1937 թ. աշնանը | 20 | — | — | — | — | 6 | 6 | — | 2 | 2 | 2 | — | — | — | — | — | — | — | — | 2 | — |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | 640 | 60 | 155 | 95 | 62 | 27 | 22 | 10 | 9 | 3 | 119 | 7 | 10 | 4 | 3 | 1 | 8 | 7 | 5 | 3 | 30 |

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ-ՈՒՄ 1936 ԹՎԱԿԱՆԻ ԱՇՆԱՆԻՑ ՄԻՆՉԵՎ 1937 ԹՎԱԿԱՆԻ ԱՇՈՒՆԸ ՆԵՐԱՌՅԱԼ ԿՈՆՍԵՐՎՏՐԵՍՏԻ ԽՈՐՀՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԽԱՂՈՂԻ ԱՅԳԻ ԳՑԵԼՈՒ ՊԼԱՆԸ, ԸՍՏ ՍՈՐՏԵՐԻ (ՀԵԿՏԱՐՆԵՐՈՎ)

Աղյուսակ № 1
(Շարունակություն)

| ՇՐՋԱՆՆԵՐ ՑԵՎ ԽՈՐՀՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ | Այգի գցելու ժամկետը | Ամբողջ տարածությունը | Ա յ գ ե ս տ ա ն ե ր: Խարջի | Մսխալի | Կախեթ | Գառան դմակ | Հաշտաշ | Քիշմիշ | Ալիկանտե | Ցեղատունջ | Խալիլի | Անորոշ սորտեր |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հոկտեմբերյան № 3 «Լուկաշեն» խորհտնտեսություն . . | 1936 թ. աշնանը | 70 | 10 | 20 | — | 15 | 15 | — | — | 2 | — | 8 |
| Հոկտեմբերյան № 4 «Հացիկ» խորհտնտեսություն . . . | 1936 թ. աշնանը | 70 | 15 | 15 | — | 20 | 10 | — | — | 5 | — | 5 |
| ԸՆԴԱՄԵՆԸ . . . . . . . . . | | 140 | 25 | 35 | — | 35 | 25 | — | — | 7 | — | 13 |

## ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ-ՈՒՄ 1936 Թ. ԱՇՆԱՆԻՑ ՄԻՆՉԵՎ 1937 Թ. ԱՇՈՒՆԸ ՆԵՐԱՌՅԱԼ ՄՐԳԱՏՈՒ ԱՅԳԻՆԵՐ ՏՆԿԵԼՈՒ ՊԼԱՆԸ (ՀԵԿՏԱՐՆԵՐՈՎ)

Աղյուսակ № 2 (Շարունակություն)

| ՇՐՋԱՆՆԵՐ | 1937 թվականի աշնանը | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Դեղձենի | | | Ծիրանենի | | | Սալորենի | | | Բալենի | | | Կեռասենի | | | Խնձորենի | | | Տանձենի | | | Ընդամենը | | |
| | Կոլտնտ. | Խորհտնտ. | Ընդա-մենը | Կոլտնտ. | Խորհտնտ. | Ընդա-մենը | Կոլտնտ. | Խորհտնտ. | Ընդա-մենը | Կոլտնտ. | Խորհտնտ. | Ընդա-մենը | Կոլտնտ. | Խորհտնտ. | Ընդա-մենը | Կոլտնտ. | Խորհտնտ. | Ընդա-մենը | Կոլտնտ. | Խորհտնտ. | Ընդա-մենը | Կոլտնտ. | Խորհտնտ. | Ընդա-մենը |
| Ալլահվերդու | 20 | — | 12 | 10 | — | 10 | 5 | — | 5 | — | — | — | — | — | — | 20 | — | 20 | 5 | — | 5 | 60 | — | 60 |
| Արթիկի | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| Ախտայի | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| Աշտարակի | 5 | — | 5 | 25 | — | 25 | 5 | — | 5 | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| Բասարգեչարի | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | 2 | — | 2 | 3 | — | 3 | 40 | — | 40 |
| Գորիսի | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| Դիլիջանի | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| Իջևանի | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| Կիրովականի | 5 | — | 5 | — | — | — | 5 | — | 5 | — | — | — | — | — | — | 5 | — | 5 | 5 | — | 5 | 20 | — | 20 |
| Ղափանի | 10 | — | 10 | 5 | — | 5 | 8 | — | 8 | 5 | — | 5 | — | — | — | 12 | — | 12 | 5 | — | 5 | 45 | — | 45 |
| Միկոյանի | 10 | — | 10 | 35 | — | 35 | — | — | — | — | — | — | — | — | — | 10 | — | 10 | 5 | — | 5 | 60 | — | 60 |
| Կոտայքի | — | — | — | 15 | — | 15 | — | — | — | — | — | — | — | — | — | 5 | — | 5 | — | — | — | 20 | — | 20 |
| Լենինականի | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| Մարտունու | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| Մեղրու | 10 | — | 10 | 5 | — | 5 | 3 | — | 3 | 2 | — | 2 | — | — | — | — | — | — | — | — | — | 20 | — | 20 |
| Ն. Բայազետի | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| Ազիզբեկովի | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| Սիսիանի | — | — | — | 20 | — | 20 | 5 | — | 5 | 3 | — | 3 | — | — | — | 5 | — | 5 | 2 | — | 2 | 35 | — | 35 |
| Ստեփանավանի | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| Թալինի | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| Շամշադինի | 5 | — | 5 | — | — | — | — | 8 | — | — | — | — | — | — | — | 5 | — | 5 | — | — | — | 10 | — | 10 |
| Վաղարշապատի | — | 5 | 5 | 40 | 10 | 50 | 10 | 5 | 15 | — | 5 | 5 | — | — | — | — | — | — | 10 | 5 | 15 | 60 | 30 | 90 |
| Վեդու | — | 5 | 5 | 50 | 10 | 60 | — | 5 | 5 | — | 5 | 5 | — | — | — | — | — | — | — | 5 | 5 | 30 | 30 | 80 |
| Ղամարլուի | 40 | — | 40 | 60 | 5 | 65 | 10 | 10 | 20 | 10 | 5 | 15 | 5 | — | 5 | — | — | — | 5 | — | 5 | 130 | 20 | 150 |
| Հոկտեմբերյանի | — | — | — | 100 | 10 | 110 | 30 | 30 | 60 | 10 | 10 | 20 | — | — | — | — | — | — | 10 | 10 | 20 | 150 | 60 | 210 |
| Երևան քաղ. | 10 | — | 10 | 25 | — | 25 | 10 | — | 10 | 5 | — | 5 | 5 | — | 5 | — | — | — | 5 | — | 5 | 60 | — | 60 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | 115 | 10 | 125 | 390 | 35 | 425 | 91 | 50 | 141 | 35 | 25 | 60 | 10 | — | 10 | 64 | — | 64 | 55 | 20 | 75 | 760 | 140 | 900 |

## ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ-ՈՒՄ 1937 Թ. ՀԱՏԱՊՏՈՒՂ ՏՆԿԵԼՈՒ ՊԼԱՆԸ, ԸՍՏ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՑԵՎ ՀԱՏՎԱԾՆԵՐԻ (հեկտարներով)

Աղյուսակ № 3

| ՇՐՋԱՆՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ | Ընդամենը | ԱՅԴ ԹՎԻՑ | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Գարնանը | | | | Աշնանը | | | | |
| | | Ցելակ | Մար | Հալարշ | Ընդամենը | Ցելակ | Մար | Հալարշ | Կոկառ | Ընդամենը |
| Ապարան | 1 | 1 | — | — | — | — | — | — | — | — |
| Ամասիա | 2 | 1 | 1 | — | 2 | — | — | — | — | — |
| Ալլահվերդի | 2 | 1 | 1 | — | 2 | — | — | — | — | — |
| Արթիկ | 5 | 1 | 1 | — | 2 | 2 | 1 | — | — | 3 |
| Ախտա | 5 | 1 | 1 | — | 2 | 2 | 1 | — | — | 3 |
| Աշտարակ | 1 | 1 | — | — | 1 | — | — | — | — | — |
| Բասարգեչար | 5 | 1 | 1 | — | 2 | 2 | 1 | — | — | 3 |
| Գորիս | 1 | 1 | — | — | — | — | — | — | — | — |
| Դիլիջան | 10 | 1 | 3 | — | 4 | 2 | 2 | 1 | 1 | 6 |
| Իջևան | 1 | 1 | — | — | 1 | — | — | — | — | — |
| Կիրովական | 10 | 3 | 2 | 1 | 6 | 3 | 1 | — | — | 4 |
| Ղափան | 1 | 1 | — | — | — | — | — | — | — | — |
| Միկոյան | 1 | 1 | — | — | 1 | — | — | — | — | — |
| Կոտայք | 8 | 2 | — | 1 | 3 | 3 | 2 | — | — | 5 |
| Լենինական | 15 | 4 | 2 | 2 | 8 | 2 | 3 | 1 | 1 | 7 |
| Մարտունի | 5 | 2 | 1 | — | 3 | 1 | 1 | — | — | 2 |
| Մեղրի | 1 | 1 | — | — | 1 | — | — | — | — | — |
| Ն. Բայազետ | 2 | 2 | — | — | 2 | — | — | — | — | — |
| Ազիզբեկով | 1 | 1 | — | — | 1 | — | — | — | — | — |
| Սիսիան | 1 | 1 | — | — | 1 | — | — | — | — | — |
| Ստեփանավան | 8 | 1 | 2 | — | 3 | 2 | 1 | 1 | 1 | 5 |
| Թալին | 1 | 1 | — | — | 1 | — | — | — | — | — |
| Շամշադին | 2 | 1 | — | — | 1 | 1 | — | — | — | 1 |
| Վաղարշապատ | 2 | 1 | — | — | 1 | 1 | — | — | — | 1 |
| Վեդի | 3 | 1 | 1 | — | 2 | 1 | — | — | — | 1 |
| Ղամարլու | 2 | 1 | — | — | 1 | 1 | — | — | — | 1 |
| Հոկտեմբերյան | 2 | 1 | — | — | 1 | 1 | — | — | — | 1 |
| Երևան քաղ. | 10 | 2 | 2 | 1 | 5 | 2 | 2 | 1 | — | 5 |
| Ընդամենը կոլտնտեսություն | 108 | 37 | 18 | 5 | 60 | 26 | 15 | 5 | 3 | 48 |
| Կիրովականի շրջանի № 7 խորհտնտեսության մեջ | 5 | 3 | — | — | 3 | 2 | — | — | — | 2 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | 113 | 40 | 18 | 5 | 63 | 28 | 15 | 5 | 3 | 50 |

## 1936 Թ. ԱՇՆԱՆԻՑ ՄԻՆՉԵՎ 1937 Թ. ԱՇՈՒՆԸ ՆԵՐԱՌՅԱԼ ՋՈՐ ՄԵՐՁԱՐԵՎԱԴԱՐՁԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐԻ ՆՈՐ ՊԼԱՆՏԱՑԻԱՆԵՐ (ՀԱՇՎԱԾ ՏՈՒՆԿԵՐԻ ՀԱՏՈՎ) ՅԵՎ ՏՆԿԱՐԱՆՆԵՐ (ՀԵԿՏԱՐՆԵՐՈՎ) ՀԻՄՆԵԼՈՒ ՊԼԱՆԸ

Աղյուսակ № 4

| ՇՐՋԱՆՆԵՐԻ ԱՆՈՒՆԸ | 1936 թ. աշնանը հատով | | | 1937 թ. աշնանը հատով | | | Տնկարաններ հեկտարներով | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Թութ | Նուռ | Նուշ | Թութ | Նուռ | Նուշ | 1936 թ. աշնանը | 1937 թ. գարնանը | 1937 թ. աշնանը | Ընդամենը |
| Ալլահվերդի | 800 | 1890 | — | 4000 | 5670 | 4000 | 1 | 2 | 1 | 4 |
| Աշտարակ | — | — | — | — | 1870 | 2800 | — | 1 | 1 | 2 |
| Գորիս | — | — | — | 400 | 1250 | — | — | 1 | — | 1 |
| Իջևան | 800 | 1890 | — | 2000 | 3125 | 1200 | 1 | 2 | 0,75 | 3 75 |
| Ղափան | 800 | 1250 | — | 2000 | 3125 | 2400 | — | 1,5 | 0,75 | 2,25 |
| Միկոյան | — | — | — | 1600 | 1250 | 800 | — | 1,0 | 0.5 | 1,5 |
| Կոտայք | — | — | — | — | — | 4400 | — | 1,0 | 0,75 | 1,75 |
| Մեղրի | 400 | 1250 | 400 | 4000 | 3780 | 3200 | 1 | 1,0 | 0.5 | 2,5 |
| Ազիզբեկով | — | — | — | — | — | 1600 | — | 0,5 | — | 0,5 |
| Շամշադին | — | — | — | 800 | 1250 | — | — | 0,5 | — | 0.5 |
| Յերևան քաղաք | — | — | — | — | — | 6000 | 1 | 1 | 0,75 | 2.75 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | 2800 | 6280 | 400 | 14800 | 21320 | 26400 | 4 | 12,5 | 6 | 22,5 |

## 1937 ԹՎԱԿԱՆԻՆ ԽԱՂՈՂԻ ՏՆԿԱՐԱՆՆԵՐ ՀԻՄՆԵԼՈՒ ՊԼԱՆԸ (ՀԵԿՏԱՐՆԵՐՈՎ)

Աղյուսակ № 5

| ՇՐՋԱՆՆԵՐ | Ընդամենը | Դրանցից | | |
|---|---|---|---|---|
| | | Խորհտնտեսություններում | Կոլտնտեսություններում | [illegible] |
| Միկոյանի | 1 | — | 1 | — |
| Մեղրու | 1 | — | 1 | — |
| Վաղարշապատի | 23 | 15 | 8 | — |
| Ղամարլուի | 29 | 5 | 24 | — |
| Վեդու | 30 | 10 | 20 | — |
| Հոկտեմբերյանի | 47 | 20 | 27 | — |
| Յերևանի | 5 | — | 5 | — |
| Ալլահվերդու | 3 | — | 2 | — |
| Ազիզբեկովի | 1 | — | 1 | — |
| Շամշադինի | 2 | — | — | 2 |
| Իջևանի | 12 | — | — | 2 |
| Գորիսի | 05 | — | 0,5 | — |
| Թալինի | 2 | — | 2 | — |
| Կոտայքի | 1 | — | 1 | — |
| ԸՆԴԱՄԵՆԸ | 147,5 | 50 | 93,5 | 4 |

# ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ-ՈՒՄ 1936 Թ. ԱՇՆԱՆԻՑ ՄԻՆՉԵՎ 1937 Թ. ԱՇՈՒՆԸ ՆԵՐԱՌՅԱԼ ՄՐԳԱՏՈՒ ՏՆԿԱՐԱՆՆԵՐ ՀԻՄՆԵԼՈՒ ՊԼԱՆԸ

Աղյուսակ № 6

| ՇՐՋԱՆՆԵՐԻ ԱՆՈՒՆԸ | 1936 թ. աշնանը | | | 1837 թ. գարնանը | | | 1937 թ. աշնանը | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Կոլտնտեսություններ | Խորհտնտեսություններ | Ընդամենը | Կոլտնտեսություններ | Խորհտնտեսություններ | Ընդամենը | Կոլտնտեսություններ | Խորհտնտեսություններ | Ընդամենը |
| Ապարան | 1,0 | — | 1,0 | — | — | — | 2 | — | 2 |
| Ամասիա | 1,0 | — | 1,0 | — | — | — | 2 | — | 2 |
| Ալլահվերդի | 2,0 | — | 2,0 | 2,0 | — | 2,0 | 6 | — | 6 |
| Արթիկ | 1,0 | — | 1,0 | — | — | — | 2 | — | 2 |
| Ախտա | 1,0 | — | 1,0 | — | — | — | 2,5 | — | 2,5 |
| Աշտարակ | 2,5 | — | 2,5 | 1,5 | — | 1,5 | 7,5 | — | 7,5 |
| Բասարգեչար | 1,0 | — | 1,0 | — | — | — | 1,5 | — | 1,5 |
| Գորիս | 1,0 | — | 1,0 | 1,5 | — | 1,5 | 2,5 | — | 2,5 |
| Դիլիջան | 1,0 | — | 1,0 | 2 | — | 2 | 2,8 | — | 2,8 |
| Իջևան | 2,0 | — | 2,0 | — | — | — | 3,0 | — | 3,0 |
| Կիրովական | 1,0 | 3 | 4,0 | 4,0 | 3 | 7,0 | 3,0 | 5 | 8,0 |
| Ղափան | 1,0 | — | 1,0 | 1,0 | — | 1,0 | 3,0 | — | 3,0 |
| Միկոյան | 1,0 | — | 1,0 | — | — | — | 4,0 | — | 4,0 |
| Կոտայք | 4,0 | 3 | 7,0 | — | — | — | 10,0 | — | 10,0 |
| Լենինական | 2,0 | — | 2,0 | — | — | — | 5,0 | — | 5,0 |
| Մարտունի | — | 3 | 3,0 | — | 2 | 2 | 2,5 | 3 | 5,0 |
| Մեղրի | 1,0 | — | 1,0 | 1,0 | — | 1,0 | 5,5 | — | 5,5 |
| Նոր Բայազետ | 1,0 | — | 1,0 | — | — | — | 2,0 | — | 2,0 |
| Ազիզբեկով | 1,0 | — | 1,0 | 1,0 | — | 1,0 | 3,5 | — | 3,5 |
| Սիսիան | 1,0 | — | 1,0 | 1,0 | — | 1,0 | 1,5 | — | 1,5 |
| Ստեփանավան | 2,0 | — | 2,0 | 2,0 | — | 2,0 | 3,5 | — | 3,5 |
| Թալին | 0,5 | — | 0,5 | — | — | — | 2,5 | — | 2,5 |
| Շամշադին | 0,5 | — | 0,5 | — | — | — | 2,0 | — | 2,0 |
| Վաղարշապատ | 3,0 | — | 3,0 | — | — | — | 5,0 | — | 5,0 |
| Վեդի | 2,0 | — | 2,0 | — | — | — | 6,5 | — | 6,5 |
| Ղամարլու | 5,0 | 8 | 13,0 | — | — | — | 13,5 | 6 | 19,5 |
| Հոկտեմբերյան | 3,5 | 29 | 32,5 | — | — | — | 8,5 | 6 | 14,5 |
| Երևան | 6,0 | 12 | 18,0 | — | — | — | 8,0 | — | 8,0 |
| Սատացում | — | — | — | 20 | — | 20 | — | — | — |
| ԸՆԴԱՄԵՆԸ | 49,0 | 58 | 107,0 | 37 | 5 | 42 | 120,8 | 20 | 140,8 |



# 1937 Թ. ԽԱՂՈՂԻ ՄԱՏՆԵՐ ՄԹԵՐԵԼՈՒ ՊԼԱՆԸ (ՀԱԶԱՐ ՀԱՏՈՎ)

Աղյուսակ № 7

| | Երևան | Լենինական | Ղամարլու | Աշտարակ | Իջևան | Հոկտեմբերյան | Միկոյան | Մեղրի | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Մուսկատ | 15 | 265 | — | — | — | — | — | — | 280 |
| Սեմիլյոն | — | 70 | — | — | — | — | — | — | 70 |
| Սերսիալ | — | 15 | — | — | — | — | — | — | 15 |
| Պինո | — | 10 | — | — | — | — | — | — | 10 |
| Տոկայ | — | 5 | — | — | — | — | — | — | 5 |
| Վերդելիո | — | 5 | — | — | — | — | — | — | 5 |
| Խարջի | 240 | 800 | 100 | 1400 | 40 | 20 | — | — | 2600 |
| Մսխալի | 45 | 30 | 20 | 35 | 900 | 70 | — | — | 1100 |
| Ձիլար | 260 | 225 | — | 300 | — | — | — | — | 785 |
| Կախեթ | — | — | 900 | — | 400 | — | — | — | 1300 |
| Հաչաբաշ | 60 | 240 | — | 80 | — | — | — | — | 380 |
| Ցեղանդարի | 3 | 7 | 12 | 2 | — | — | — | — | 24 |
| Խալիլի | 2 | 6 | 4 | 2 | — | 8 | — | — | 22 |
| Քիշմիշի | 6 | 18 | 4 | — | 120 | — | — | — | 148 |
| Ալախկի | 6 | 12 | — | 9 | 8 | — | — | — | 35 |
| Իծապտուկ | 5 | 9 | 15 | — | 9 | 14 | — | — | 52 |
| Գառան դմակ | — | 9 | 8 | 2 | — | 800 | — | — | 816 |
| Ալիգարա | — | — | — | — | — | — | 10 | 5 | 15 |
| Ջանադան | 12 | 8 | 5 | 8 | 3 | 4 | 1 | 2 | 43 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | 654 | 1731 | 1068 | 1838 | 1480 | 916 | 11 | 7 | 7705,0 |

## 1937 Թ. ԳԱՐՆԱՆԸ ԿՈԼՏՆՏԵՍԱՅԻՆ ՏՆԿԱՐԱՆՆԵՐՈՒՄ ՊԱՏՎԱՍՏՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՊԼԱՆԸ, ԸՍՏ ՑԵՂԵՐԻ ՑԵՎ ՍՈՐՏԵՐԻ (ՀԵԿՏԱՐՆԵՐՈՎ)

Աղյուսակ № 8

**1. Ալլահվերդի 7.000, վորից**

| | |
|---|---|
| Դեղձենի՝ նարնջի | 1000 |
| սախրավի | 1000 |
| Ծիրանենի՝ շալախ | 1000 |
| Թաբարզա | 1000 |
| Խնձորենի՝ ձմեռվա վոսկե | |
| պարմեն | 500 |
| բելֆլյոր | 500 |
| շամպանյան ռանետ | 500 |
| անտոնովկա | 500 |
| Տանձենի՝ մալաչա | 500 |
| զանազան բեռաներ | 500 |

**2. Աշտարակ—5.000, վորից՝**

| | |
|---|---|
| Դեղձենի՝ նարնջի | 500 |
| զաֆրանի | 250 |
| լոձ | 250 |
| Ծիրանենի՝ շալախ | 2000 |
| Թաբարզա | 1000 |
| աղջանաբադ | 1000 |

**3. Միկոյան—3.000, վորից՝**

| | |
|---|---|
| Ծիրանենի՝ շալախ | 2000 |
| Թաբարզա | 1000 |

**4. Կոտայք—7.000, վորից՝**

| | |
|---|---|
| Ծիրանենի՝ շալախ | 3000 |
| Թաբարզա | 1000 |
| աղջանաբադ | 1000 |
| ամբան | 1000 |
| խոսրովշահի | 1000 |

**5. Մեղրի—2.500, վորից՝**

| | |
|---|---|
| Դեղձենի՝ զաֆրանի | 500 |
| սալամի | 500 |
| գյուլի | 500 |
| Ծիրանենի՝ շալախ | 1000 |

**6. Վաղարշապատ—7.000, վորից՝**

| | |
|---|---|
| Դեղձենի՝ նարնջի | 2000 |
| զաֆրանի | 2000 |
| լոձ | 1000 |
| Ծիրանենի՝ շալախ | 2000 |

**7. Ղամարլու—11.000, վորից՝**

| | |
|---|---|
| Դեղձենի՝ նարնջի | 3000 |
| զաֆրանի | 2000 |
| լոձ | 1000 |
| Ծիրանենի՝ շալախ | 2000 |
| Թաբարզա | 1000 |
| խոսրովշահի | 1000 |
| ամբան 1000 | 1000 |

**8. Հոկտեմբերյան—4.000, վորից,**

| | |
|---|---|
| Դեղձենի՝ նարնջի | 1000 |
| Ծիրանենի՝ շալախ | 2000 |
